

**ՌԱԵՀ-Ի ՁԵԿՈՒՅՑԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ**

(մշտադիտարկման հինգերորդ փուլ)

Ընդունվել է 2016թ. հունիսի 28-ին

Հրապարակվել է 2016թ. հոկտեմբերի 4-ին

ECRI Secretariat  
Directorate General II - Democracy  
Council of Europe  
F-67075 STRASBOURG Cedex  
Tel.: + 33 (0) 3 90 21 46 62  
E-mail: [ecri@coe.int](mailto:ecri@coe.int)

[www.coe.int/ecri](http://www.coe.int/ecri)

**ՌԱԵՀ-Ի ՁԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՄԱՍԻՆ**  
(մշտադիտարկման հինգերորդ փուլ)

Ընդունվել է 2016թ. հունիսի 28-ին

Հրապարակվել է 2016թ. հոկտեմբերի 4-ին



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	7
ԱՍՓՈՓՈՒՄ .....	9
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	13
<b>I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՄԱՆԵՐ .....</b>	<b>13</b>
1. ՌԱՍԻՉՄԻ ԵՒ ՌԱՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.....	13
- ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....	13
- ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	15
- ՄԱՍՆԱԳԻՏԱՅՎԱԾ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ .....	18
2. ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԽՈՍՔ .....	19
- ՀՈՄՈՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ .....	20
- ՏՎՅԱԼՆԵՐ .....	20
- ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ .....	21
- ՌԱՍԻՉՍԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԱՅԼ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ .....	21
- ՌԱՍԻՉՍԵՐ ՀԱՍՏԱՅԱՆՑՈՒՄ ԵՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ .....	23
- ԾԱՅՐԱԶԵՂԱԿԱՆ ԽՄԲԵՐ .....	24
- ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՉԱԳԱՆՔԸ.....	25
3. ՌԱՍԻՏԱԿԱՆ ԵՒ ՀՈՄՈՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՆԵՐԻ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	30
- ՀՈՄՈՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՆԵՐԻ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ.....	30
- ՏՎՅԱԼՆԵՐ ԵՒ ԽԼԻՐԻ ՄԱՍՇՏԱԲՆԵՐԸ .....	30
- ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՉԱԳԱՆՔԸ.....	30
4. ԻՆՏԵԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	32
- ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՅԼ ՄԻԳՐԱՆՏՆԵՐ .....	32
ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԵՐԿՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԷԹՆԻԿԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈՔՐԱՍՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	37
<b>II. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ԹԵՄԱՆԵՐ.....</b>	<b>39</b>
1. ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	39
2. ԼԳՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՀԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....	40
- ՏՎՅԱԼՆԵՐ .....	40
- ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ .....	41
- ՄԱՍՆԱԳԻՏԱՅՎԱԾ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ .....	43
- ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐՔԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ .....	43
<b>ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>47</b>
<b>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....</b>	<b>49</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>53</b>



## ՆԱԽԱԲԱՆ

Եվրոպայի խորհրդի հիմնադրած՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) մարդու իրավունքների մշտադիտարկման անկախ մարմին է, որը մասնագիտացված է ռասիզմի և անհանդուրժողականության հետ կապված հարցերում: Այն կազմված է անկախ և անկողմնակալ անդամներից, ովքեր նշանակվում են իրենց բարոյական հեղինակության և ռասիզմի, այլատյացության, հակահրեականության և անհանդուրժողականության ոլորտում իրականացրած՝ հանրությանը հայտնի գործունեության հիմքով:

Իր կանոնադրական գործունեության շրջանակներում ՌԱԵՀ-ն իրականացնում է երկիր առ երկիր մշտադիտարկման աշխատանք՝ վերլուծելով ռասիզմի և անհանդուրժողականության հետ կապված իրավիճակը Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությունում և առաջարկություններ ու առաջարկներ է մշակում բացահայտված խնդիրների կարգավորման նպատակով:

ՌԱԵՀ-ի երկիր առ երկիր մշտադիտարկումը վերաբերում է բոլոր անդամ պետություններին հավասար հիմքերով: Աշխատանքն իրականացվում է հնգամյա շրջափուլերով՝ տարեկան ներառելով 9-10 երկիր: Առաջին փուլի զեկույցներն ավարտվել են 1998թ.-ի վերջին, երկրորդ փուլինը՝ 2002թ.-ի վերջին, երրորդ փուլինը՝ 2007թ.-ի վերջին, իսկ չորրորդ փուլինը՝ 2014թ.-ի սկզբին: Հինգերորդ փուլի զեկույցների ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են 2012թ.-ի նոյեմբերին:

Զեկույցների նախապատրաստման աշխատանքային մեթոդները ներառում են փաստագրական վերլուծություններ, այցելություն առնչվող երկիր և այնուհետև գաղտնի երկխոսություններ ներպետական իշխանությունների հետ:

ՌԱԵՀ-ի զեկույցները հարցումների կամ վկայության ցուցմունքների արդյունք չեն: Դրանք բազմազան աղբյուրներից հավաքագրված մեծածավալ տեղեկատվության վրա հիմնված վերլուծություններ են: Փաստագրական ուսումնասիրությունները հիմնված են մեծաթիվ ազգային և միջազգային գրավոր աղբյուրների վրա: Տեղում այցելությունը հնարավորություն է ընձեռում հանդիպել անմիջապես ներգրավված կողմերի հետ (պետական և ոչ պետական )՝ մանրամասն տեղեկություններ հավաքագրելու նկատառումով: Ներպետական իշխանությունների հետ գաղտնի երկխոսության գործընթացն վերջիններիս հնարավորություն է տալիս ,եթե նրանք նպատակահարմար են գտնում՝ նախնական զեկույցի վերաբերյալ մեկնաբանություններ տրամադրել՝ շտկելու զեկույցում տեղ գտած հնարավոր փաստական սխալները: Երկխոսության ավարտին ներպետական իշխանությունները ցանկության դեպքում կարող են պահանջել, որ իրենց տեսակետները կցվեն ՌԱԵՀ-ի վերջնական զեկույցին:

Հինգերորդ փուլի երկիր առ երկիր զեկույցները կենտրոնացած են չորս թեմաների վրա, որոնք ընդհանուր են բոլոր անդամ պետությունների համար՝ (1) Օրենսդրական հարցեր, (2) Ատելություն սերմանող խոսք, (3) Բռնություն, (4) Ինտեգրման քաղաքականություններ, ինչպես նաև յուրաքանչյուր պետությանը բնորոշ մի շարք թեմաներ: Այս կապակցությամբ ուշադրություն կդարձվի չորրորդ փուլի միջանկյալ առաջարկություններին, որոնք չեն կատարվել կամ մասամբ են կատարվել մշտադիտարկման չորրորդ փուլի ընթացքում:

Հինգերորդ փուլի շրջանակներում կրկին պահանջ է ներկայացվում երկու կոնկրետ առաջարկությունների առաջնահերթ իրականացման համար, որոնք ընտրվել են զեկույցում ներկայացվածների թվից: ՌԱԵՀ-ն այս երկու առաջարկությունների իրականացման վերաբերյալ միջանկյալ գնահատում կիրականացնի սույն զեկույցի հրապարակումից հետո ոչ ուշ, քան երկու տարի անց:

Սույն զեկույցը կազմվել է ՌԱԵՀ-ի կողմից իր սեփական պատասխանատվությամբ:  
Այն արտացոլում է իրադրությունն առ 2016 թվականի մարտի 17-ը, դրան հաջորդած  
զարգացումները ներառված չեն ստորև ներկայացվող վերլուծության մեջ և հաշվի չեն  
առնվել զեկույցում տեղ գտած եզրակացություններում և առաջարկներում:



## ԱՄՓՈՓՈՒՄ

**Հայաստանի մասին 2010թ. դեկտեմբերի 7-ին ՌԱԵՀ ի չորրորդ զեկույցի ընդունումից ի վեր առաջընթաց է գրանցվել նշյալ զեկույցում լուսաբանված մի շարք ոլորտներում:**

Հայաստանը վճռականություն է դրսևորել ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարում: Օրինակ՝ 2013թ. հոկտեմբերին նախաձեռնել է «Պայքար Եվրոպայում ռասիզմի, այլատյացության և անհանդուրժողականության դեմ» խորհրդածողովի կազմակերպումը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանակներում:

Ինչ վերաբերում է օրենսդրությանը, Հայաստանի իշխանությունները մեկնարկել են Քրեական օրենսգրքի վերանայման գործընթաց: Ուշադրությունը կսնեռվի ատելության հիմքով կատարված հանցագործությունների քրեականացման վերաբերյալ դրույթների համապատասխանեցմանը ՌԱԵՀ-ի՝ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականի պահանջներին:

Ի հավելումն, իշխանությունները ձեռնամուխ են եղել համապարփակ խտրականության դեմ օրենսդրության մշակման գործին:

Ինչ վերաբերում է ռասայական խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարին, ապա Հայաստանն ակտիվ մասնակցություն ունի Եվրոպայի խորհրդի HELP աջակցության ծրագրում: Այս նախաձեռնությունն օգնել է բարելավել ռասիզմի և ռասայական խտրականության հարցերին արդյունավետ արձագանքելու արդարադատության ոլորտի մասնագետների կարողությունները:

Ինտեգրման ոլորտում Հայաստանը միջոցներ է ձեռնարկել Սիբիայից մարդկանց մեծ ներհոսքի ինտեգրման ուղղությամբ: Օրինակ՝ իշխանությունները բացել են ինտեգրման կենտրոն:

Ինչ վերաբերում է պատմականորեն երկրում բնակվող էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին, ապա Հայաստանի իշխանություններն էականորեն ավելացրել են էթնիկական փոքրամասնություններին տրամադրվող ֆինանսական աջակցությունը: Ազգային փոքրամասնությունների գործունեությունը համակարգող խորհուրդն ընդունել է օբյեկտիվ չափանիշներ և ընթացակարգային կանոններ: Ֆինանսական աջակցություն է տրամադրվում էթնիկական փոքրամասնության իրական կարիքներին համապատասխան: Ի վերջո իշխանությունները զգալի ջանքեր են գործադրել նախադպրոցական հաստատությունների հարմարությունների ընդլայնման և դպրոց հաճախելու համար երեխաների պատրաստվածության մակարդակի բարելավման ուղղությամբ:

**ՌԱԵՀ-ը ողջունում է այս դրական զարգացումները Հայաստանում: Այնուամենայնիվ, չնայած արձանագրված առաջընթացին, որոշ հարցեր դեռևս շարունակում են մտահոգության տեղիք տալ:**

Հայաստանի իշխանությունները հանձն են առել իրականացնել նշանակալի օրենսդրական նախաձեռնություններ: Սակայն քրեական, քաղաքացիական և վարչական օրենսդրությունը տուժում է բազմաթիվ թերությունների պատճառով, ինչի հետևանքով հնարավոր չէ համապարփակ ձևով պայքարել ռասիզմի կամ ռասայական խտրականության դեմ: Դատարանները չունեն միջազգային չափանիշների կիրառման փորձառություն, որոնց վրա հայցվորները հնարավորություն կունենան ապավինել առկա իրավական թերությունները շտկելու համար:

Ռասայական խտրականության դեպքերում ապացուցման բեռի բաշխման համար նախատեսված որևէ մեխանիզմի բացակայությունը դժվարացնում է ապացույցների հաստատումը: Դա վտանգում է իրեն հանձնված ռասայական խտրականության գործերի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու Մարդու իրավունքների պաշտպանի կարողությունը:

ՌԱԵՀ-ը նշում է ատելություն սերմանող խոսքի աճը, որը հանգեցնում է բռնության գործողությունների: Դրա հիմնական թիրախներն են ԼԳԲՏ համայնքի անդամները և ոչ ավանդական կրոնական խմբերի անդամները: Այս իրավիճակն էլ ավելի անհանգստացնող է՝ հաշվի առնելով ռասիստական և հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի հողի վրա կատարված հանցագործությունների մասին հաղորդումներ չտալու բարձր մակարդակը և որ ատելության կամ խտրականության հողի վրա կատարված հանցագործությունների քննության վերաբերյալ քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի դրույթների արդյունավետությանը լրջորեն խոչընդոտում են օրենսդրական թերությունները: Ի հավելումն, քաղաքական դիսկուրսը հաճախ պարունակում է այս խոցելի խմբերի հանդեպ խարանդ բնույթի հայտարարություններ, ինչը նպաստում է բնակչության շրջանում ռասիստական և անհանդուրժող վերաբերմունքի պարզունակացմանը: Այս հարցի առնչությամբ ՌԱԵՀ-ն ավստոսանք է հայտնում, որ իշխանությունների կամ քաղաքական առաջնորդների կողմից բացակայում է 2012թ. մայիսին Երևանում համասեռականների ակումբի հրկիզմանը հետևած հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի հայտարարությունների ցանկացած դատապարտում:

Ինտեգրման ոլորտում ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանը դեռ չի ընդունել ինտեգրման համապարփակ քաղաքականություն: Այնուհանդերձ, իշխանությունները նշել են, որ 2016թ. սեպտեմբերին նոր առաջարկ է ներկայացվելու Խորհրդարան: ՌԱԵՀ-ն այնուհետև նշում է, հավասարության վիճակագրությունը խոցելի խմբերի իրավիճակի վերաբերյալ հստակ պատկեր չի տրամադրում՝ կապված այն խտրականության հետ, որից նրանք տուժում են:

Խոցելի խմբերի ինտեգրումը խթանելու միջոցները հստակ սահմանված չեն: Չկա նրանց ֆինանսավորման ընդհանուր պլանավորում (որն առավել ևս ներառում է արտաքին դոնորներ), և առկա են որոշակի բացեր: Միգրանտների համար նախատեսված աջակցության և օգնության միջոցներն այս պահի դրությամբ բավարար տևական չեն հայ հասարակության մեջ նրանց ինտեգրումն ապահովելու համար: Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիրը դեռևս վերջնականացված չէ:

**Սույն զեկույցում ՌԱԵՀ-ը կոչ է անում իշխանություններին լրացուցիչ միջոցներ ձեռնարկել մի շարք ոլորտներում. այն ներկայացնում է մի շարք առաջարկություններ, որոնք ներառում են հետևյալը՝**

Ինչ վերաբերում է ատելության հողի վրա հանցագործությունների դեմ պայքարելու քրեական իրավունքի դրույթներին, ապա իշխանությունները պետք է քրեական օրենսդրությունը համապատասխանեցնեն Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականին\*:

Արգելված հիմքերի ցանկին պետք է ավելացվեն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: Պետք է ավելացվի մի դրույթ, որն ուղղակիորեն կամրագրի, որ հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը ծանրացուցիչ հանգամանք է բոլոր սովորական հանցագործությունների դեպքում: Ինչ վերաբերում է քաղաքացիական և

---

\*Սույն պարբերության մեջ տեղ գտած առաջարկությունների կատարման միջանկյալ գնահատումը ՌԱԵՀ-ը կիրականացնի ոչ ուշ, քան սույն զեկույցի հրապարակումից երկու տարի անց:

վարչականօրենսդրությանը, ապա իշխանությունները պետք է ընդունեն խտրականության դեմհամապարփակ օրենք, որը կներառի ՌԱԵՀ-ին հետաքրքրող բոլոր հիմքերը կյանքի բոլոր ոլորտներում:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանին, ապա իշխանությունները պետք է կամ փոփոխության ենթարկենօրենքը՝ նրան հնարավորություն ընձեռելովգրադվելու խտրականության հարցերով մասնավոր ոլորտում, կամ ստեղծեն հավասարության անկախ մարմին:

Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարելու կարողությունը կխթանվի անկախ մեխանիզմի ստեղծմամբ, որը պատասխանատու կլինի ոստիկանության դեմ բերված բոլոր տեսակի բողոքների քննության համար:

Անհրաժեշտ է նաև լրատվական էթիկայի կանոնագիրք, որը կներառի ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի դեմ հստակ դրույթներ: Խորհրդարանում վարքագծի կանոնների կիրառումը պետք է պատիժ նախատեսի խորհրդարանականների կողմից ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի համար: Իշխանությունները պետք է հետաքննություններ և հետապնդումներ նախաձեռնեն ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության կամ ատելության հրահրման կամ սպառնալիքների բոլոր դեպքերում: Հայաստանի իշխանությունները պետք է ատելություն սերմանող խոսքը և հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի հողի վրա կատարված բռնությունները դատապարտող հրապարակային հայտարարություն անեն:

Ինտեգրման ոլորտում իշխանությունները պետք է մշակեն ազգային ռազմավարություն և ստեղծեն հավասարության տվյալների հավաքագրման և հավասարության վիճակագրության մշակման համակարգ:

Խոցելի խմբերի ինտեգրման ծրագրերը պետք է ներառեն նրանց նպատակների նկարագրությունը և այդ խմբերի վրա դրանց ազդեցության գնահատման չափանիշների ամբողջական ցանկը: Նրանք նաև պետք է ներառեն հստակ ֆինանսական պլան, որում կսահմանվեն այն գործողությունները, որոնք պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեից ևգործողություններ, որոնց ֆինանսավորումը պետք է հայթայթել արտաքին դոնորներից\*:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### I. Ընդհանուր թեմաներ

#### 1. Ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի օրենսդրություն<sup>1</sup>

1. ՌԱԵՀ-ը մի քանի առիթներով ուսումնասիրել է այն բազմազան իրավական դրույթները, որոնք կիրառելի են ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի ներպետական օրենսդրության վերաբերյալ իր Ընդհանուր քաղաքականության (այսուհետ՝ ԸՔՀ) թիվ 7 հանձնարարականի և ռասիզմի, այլատյացության, հրեատյացության և անհանդուրժողականության դեմ պետական մակարդակով պայքարի մասնագիտացված մարմինների վերաբերյալ իր Թիվ 2 ԸՔՀ-ի լույսի ներքո: Ստորև ներկայացված վերլուծությունը կանդրադառնա այն կետերին, որոնք դեռևս չեն ուսումնասիրվել կամ որոնցում դեռ առկա են թերություններ<sup>2</sup>:

#### - Քրեական իրավունք

2. ՌԱԵՀ-ը նշում է, որ Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը վկայակոչում է միայն ազգությունը, ռասան և կրոնը՝ որպես քրեական հանցագործություններ (այսուհետև՝ «արգելված հիմքեր») դասակարգվող ռասիստական գործողություններից ստուժողներին բնութագրող հատկանիշներ: Դեռևս անորոշ է, թե արդյոք ազգությունը պետք է ընկալվի միայն որպես քաղաքացիություն (և այդ դեպքում, արդյոք այն վերաբերում է Հայաստանի, թե, ընդհանուր առմամբ, ցանկացած քաղաքացիության) կամ արդյոք այդ հասկացությունը վերաբերում է նաև ազգային ծագմանը: Արգելված հիմքերի այս ցանկում ներառված չեն մաշկի գույնը, լեզուն կամ էթնիկական ծագումը: Այն նաև չի վկայակոչում սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը (տես նաև 25-26-րդ և 57-րդ կետերը)<sup>3</sup>:

3. Թիվ 2 ԸՔՀ-ի 18-րդ պարբերության ա) կետի առնչությամբ ՌԱԵՀ-ը նշում է որ 226-րդ հոդվածը քրեականացնում է արգելված հիմքերով ատելության և սպառնալիքների հրահրումը: Որևէ այլ դրույթ չի քրեականացնում բռնության կամ խտրականության հանրության հրահրումը : Նմանապես չկան արգելված հիմքերով հրապարակային վիրավորանքները և զրպարտությունն արգելող

---

<sup>1</sup>Համաձայն ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության (ԸՔՀ) թիվ 7 հանձնարարականի՝ «ռասիզմ» այն համոզմունքն է, երբ այնպիսի հիմքերը, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, ազգությունը կամ ազգային կամ էթնիկական ծագումն արդարացնում են որևէ անձի կամ մի խումբ անձանց քամահրանքը, կամ որևէ անձի կամ մի խումբ անձանց գերազանցության ընկալումը: «Ռասայական խտրականությունն» այս հիմքերի վրա հիմնված ցանկացած տարբերակված մոտեցումն է, որը չունի օբյեկտիվ կամ ողջամիտ արդարացում:

<sup>2</sup>ՌԱԵՀ-ը նշում է, որ հիմնական օրենսդրական ծրագրերն իրագործման փուլում են, ներառյալ՝ ՌԱԵՀ-ին հետաքրքրող ոլորտներում: Դա այստեղ վերաբերում է «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի» մասին Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 2012թ. հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգադրության Հավելված 1-ի 4-ից 6 գլուխներին և այդ ծրագրից բխող միջոցառումների ցանկին:

<sup>3</sup>Ինչ վերաբերում է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունն արգելված հիմքերի ցանկում ընդգրկելուն, ապա այս նախաձեռնությունը հատուկ նշանակություն ունի սույն զեկույցի Մաս II.2-ի համատեքստում՝ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձանց նկատմամբ անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ, քանի որ խտրականությունը ԼԳԲՏ անձանց նկատմամբ գլխավորապես հիմնված է «սեռական կողմնորոշման» և «գենդերային ինքնության» հիմքերին:

առանձին դրույթներ<sup>4</sup>: ՌԱԵՀ-ը նաև նշում է, որ 226-րդ հոդվածը չի հաստատվում, թեարդյոք անձանց խմբերը կարող են տուժող համարվել:

4. 226-րդ հոդվածում ներառված են այլ դրույթներ, որոնք քրեականացնում են թիվ 7ԸՔՀ-ի 18-րդ պարբերության դ), գ) և ե) ենթակետերում նշված գործողությունները: Բացի ատելության և սպառնալիքների հրահրումից, այն արգելում է այդ հանցագործությունների կատարումը զանգվածային լրատվամիջոցների միջոցով, պաշտոնական դիրքի չարաշահմամբ կամ կազմակերպված խմբի կողմից: Այնուամենայնիվ, ՌԱԵՀ-ը նշում է հետևյալ բացերը՝ 18-րդ պարբերությանդ) ենթակետի հետ կապված՝ 226-1-րդ հոդվածը սահմանափակվում է «ռասայի» հատկանիշով անձանց խմբավորումների գերազանցության հավակնող կամ այլ մարդկանց ազգային արժանապատվությունը վարկաբեկելու նպատակ ունեցող գաղափարախոսության արտահայտման արգելմամբ: 18-րդ պարբերության գ) ենթակետի հետ կապված՝ Քրեական օրենսգրքը հստակ չի քրեականացնում ռասիստական նյութերի բաշխումը, տարածումը, թողարկումը և պահպանումը: 18-րդ պարբերության է) ենթակետի հետ կապված՝ 226-րդ հոդվածը չի քրեականացնում ռասիզմի նպաստող խմբի ստեղծումը կամ առաջնորդումը, նման խմբին սատարումը կամ մասնակցությունը դրա գործունեությանը՝ թիվ 7ԸՔՀ-ի 18-րդ պարբերությանն ա), բ), գ), դ), ե) և զ) ենթակետերում ներառված հանցագործություններում ներդրում ունենալու նպատակով:
5. Թեև Քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներ արգելում են ցեղասպանությունը (հոդված 393), մարդկությանդեմ ուղղված հանցագործությունները (հոդված 392) և ազդեցիկ պատերազմի հրապարակային կոչերը (հոդված 385), այդուհանդերձ, չկան քրեական իրավունքի դրույթներ, որոնք արգելում են ռասիստական նպատակներով այդպիսի հանցագործությունների, և մասնավորապես՝ պատերազմական հանցագործությունների հանրային ժխտումը, պարզունակացումը, արդարացումը կամ համակերպումը, ինչպես առաջարկվում է թիվ 7ԸՔՀ-ի 18-րդ պարբերությանն) ենթակետով:
6. Ինչ վերաբերում է թիվ 7ԸՔՀ-ի 18-րդ պարբերության ը) ենթակետին, ապա 226-րդ հոդվածը չի պարունակում անձի պետական պաշտոնավարման կամ պաշտոն զբաղեցնելիս ռասայական խտրականությունն արգելող կոնկրետ դրույթներ: 143.1-րդ հոդվածն արգելում է մարդու իրավունքների և քաղաքացիների ազատությունների ոտնահարումը, մասնավորապես՝ պաշտոնական դիրքի չարաշահմամբ (հոդված 143.2), սակայն այստեղ ևս չկան թիվ 7ԸՔՀ-ի 18-րդ պարբերությանը) ենթակետով պահանջվող հստակ դրույթներ:
7. Ինչ վերաբերում է թիվ 7ԸՔՀ-ի 21-րդ կետին, ապա 63-րդ հոդվածն ամրագրում է, որ համապատասխան առանձին ներպետական օրենքի դրույթներում վկայակոչված ցանկացած հանցագործության դեպքում ռասիստական շարժառիթը համարվում է ծանրացուցիչ հանգամանք: Այնուհանդերձ, այս

---

<sup>4</sup>ՌԱԵՀ-ը հասկանում է, որ Հայաստանի իշխանությունները հանել են բոլոր ընդհանուր դրույթներն իրենց քրեական իրավունքից տարբեր միջազգային կազմակերպությունների պահանջով: Այնուհանդերձ, ՌԱԵՀ-ը համարում է, որ կոնկրետ քրեական հանցագործություններ պետք է մնան Քրեական օրենսգրքում, եթե դրանք կատարվում են ռասիստական հիմքերով:

հողվածը չի ներառում<sup>5</sup> թիվ 7ԸՔՀ-ով արգելված բոլոր հիմքերը (տես 2-րդ կետը)<sup>5</sup>:

8. Ի վերջո ՌԱԵՀ-ը տեղյակ չէ որևէ քրեական դրույթների մասին, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց պատասխանատվությանը ռասայական շարժառիթով կատարված որևէ հանցագործության համար, որոնք քրեականացվում են ներպետական օրենքի համապատասխան դրույթներով, ինչպես առաջարկվում է թիվ 7ԸՔՀ-ի 22-րդ պարբերությունով:
9. Վերլուծության այս փուլում, ՌԱԵՀ-ը ցանկանում է նշել Կառավարության ներկայիս քրեական օրենսգրքի վերանայման նախաձեռնությունը՝ կապված ռասիզմի և ռասայական խտրականության հարցերի հետ: Մինչ այժմ ստացված տեղեկությունների համաձայն՝ այդ նախաձեռնությունը ներառելու է արգելված հիմքերի ցանկի ընդլայնում, մասնավորապես՝ արգելված հիմքերի շարքում ընդգրկելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ռասայական շարժառիթով կատարված հանցագործությունների դեպքում, ռասիստական շարժառիթը՝ որպես ծանրացուցիչ հանգամանք բոլոր սովորական հանցագործությունների դեպքում և ռասիստական վարքի որոշակի այլ ձևերի քրեականացում: ՌԱԵՀ-ը համարում է, որ քրեական օրենսգրքի վերանայումը նաև ունի համապատասխան քրեական դրույթների կիրառումը բարելավելու նպատակ: Վերանայված օրենսգրքի նախագիծը պետք է ներկայացվի 2016թ.-ին: ՌԱԵՀ-ը համարում է, որ օրենսդրական այս նախաձեռնությունը Հայաստանի քրեական իրավունքը թիվ 7ԸՔՀ-ին լիովին համահունչ դարձնելու եզակի հնարավորություն է:

10. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ իշխանություններն իրենց քրեական իրավունքը, ընդհանուր առմամբ, համապատասխանեցնեն Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականին, ինչպես մատնանշված է նախորդ կետերում: Մասնավորապես դրանք պետք է (1) «արգելված հիմքերի» ցանկում բացահայտորեն ներառեն մաշկի գույնը, լեզուն, ազգությունը (ինչն ընկալվում է որպես քաղաքացիություն), ազգային կամ էթնիկական ծագումը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, (2) քրեականացնեն բռնությունների հրահրումը և ռասայական խտրականության հրահրումը, (3) քրեականացնեն ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հանրային ժխտումը, պարզունակացումը, արդարացումը կամ համակերպումը:

**- Քաղաքացիական և վարչական իրավունք**

11. Հայաստանի մասին իր 3-րդ զեկույցում<sup>6</sup>, ՌԱԵՀ-ը վերստին առաջարկել է, որպեսզի իշխանությունները մշակեն ռասայական խտրականության դեմ քաղաքացիական և վարչական համապարփակ օրենսդրություն՝ հիմնվելով Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականի վրա: Այլ մարմիններ, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների

<sup>5</sup>Քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներ ստեղծում են ռասիզմին բնորոշ լրացուցիչ հանցագործություններ այն իմաստով, որ դրանք նախատեսում են ավելի խիստ պատիժներ սովորական հանցագործությունների համար, որոնք կատարվել են «ազգային, ռասայական կամ կրոնականատեղության կամ կրոնական մոլեռանդության» շարժառիթով: 104-13-րդ հոդված՝ սպանությունը, 112-12-րդ հոդված՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, 113-7-րդ հոդված՝ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, 119-7-րդ հոդված՝ խոշտանգումը, 185-4-րդ հոդված՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը և 265-2-րդ հոդված՝ Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը:

<sup>6</sup>ՌԱԵՀ (2011ա), 25-րդ կետ:

հանձնակատարը<sup>7</sup> և Եվրոպական հանձնաժողովը<sup>8</sup> նմանօրինակ առաջարկություններ են ներկայացրել: ՌԱԵՀ-ը նկատի է առնում, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից՝ ազգային և միջազգային փորձագետների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ խորհրդակցությամբ մշակվել է խտրականության պայքարի մասին օրենքի նախագիծ: Այնուհանդերձ, նախագիծը չի ներկայացվել Ազգային ժողով, հավանաբար, Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին 2013թ. օրենքի ուժի մեջ մտնելու շուրջ ի հայտ եկած հակասությունների պատճառով (հակասությունների շուրջ ասելություն սերմանող խոսքի ասպեկտների վերաբերյալ տես ստորև՝ 31-րդ և 37-րդ կետերը): ՌԱԵՀ-ը մասնավորապես նշում է, որ նախագիծն ի վերջո չի ներառել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հատկանիշով խտրականությունն ուղղակիորեն արգելող որևէ դրույթ<sup>9</sup>: Այն համարում է, որ այս դրույթները հանվել են օրենքի նախագծից այն պատճառաբանությամբ, որ նման ուղղակի արգելումն անհրաժեշտ չէ, նախագծում ներառված ընդհանուր դրույթները համարվել են բավարար<sup>10</sup>:

12. Այնուամենայնիվ, Հայաստանի իշխանություններն ընդունել են խտրականության դեմ պայքարի մասին օրենք ունենալու անհրաժեշտությունը<sup>11</sup>: Այսպիսով, 2014թ. մարտին կառավարությունն ընդունել է Գործողությունների ծրագիր՝ 2012թ. հոկտեմբերի՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության իրականացման նպատակով: Ծրագիրը նախատեսում էր գնահատել, թե արդյոք Հայաստանի համապատասխան օրենքները համադրելի էին միջազգային իրավունքի հետ և արդյոք անհրաժեշտ էր խտրականության դեմ պայքարի մասին օրենք: ՌԱԵՀ-ը համարում է, որ այս գնահատումն իրականացվել է և այս կապակցությամբ վկայակոչում է Նիդեռլանդների կառավարության աջակցությամբ և Եվրասիա հիմնադրամի նախաձեռնությամբ վերջերս հրապարակած իրավական հետազոտությունը<sup>12</sup>: ՌԱԵՀ-ը նաև նշում է, որ Հայաստանի իշխանությունները սկսել են աշխատել օրենքի նախագծի մշակման ուղղությամբ, որում, ըստ նրանց, հաշվի են առնվելու Թիվ 7ԸՔՀ-ի տարբեր առաջարկությունները և որ նրանց նպատակն է այս օրենքի նախագիծը ներկայացնել 2016թ.-ին: Մինչև հակախտրականության մասին նոր օրենքի ուժի մեջ մտնելը ՌԱԵՀ-ի 3-րդ զեկույցում տեղ գտած համապատասխան դիտարկումները և առաջարկությունները մնում են ուժի մեջ և կարող են մանրամասնվել հետևյալ ձևով
13. 2015թ. դեկտեմբերին փոփոխված Սահմանադրության 29-րդ հոդվածը նախատեսում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և որ ցանկացած խտրականություն, կախված այնպիսի հատկանիշներից, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, էթնիկական [...] ծագումը, [...] լեզուն, կրոնը կամ

<sup>7</sup>Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների գծով հանձնակատար (2015), 103-րդ և 114-րդ կետեր:

<sup>8</sup>Եվրոպական հանձնաժողով, Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ (2015), էջ 4:

<sup>9</sup>Ամենաթի ինթերնեյշնլ (2013), էջ 11:

<sup>10</sup>Եվրոպական հանձնաժողով, Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ (2015), էջ 2:

<sup>11</sup>Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե (2015), 14-րդ կետ:

<sup>12</sup>Ղազարյան Ա. և Գրիգորյան Վ. (2015):



աշխարհայացքը, [...] ազգային փոքրամասնությանը պատկանելիությունը, [...] կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: ՌԱԵՀ-ը ողջունում է այն փաստը, որ այս դրույթը հստակ արգելում է խտրականությունը, ինչպես առաջարկվում է Թիվ 7ԸՔՀ-ի 2-րդ և 4-րդ կետերով: Ավելին, խտրականությունն արգելող վարչական և քաղաքացիական իրավունքի զգալի թվով դրույթները ցույց են տալիս բոլոր ոլորտներում խտրականության դեմ պայքարելու իշխանությունների վճռականությունը: Դրանց թվում են օրինակ, Աշխատանքային օրենսգրքի 3(3)-րդ, 114(4)(4)-րդ և 180(3)-րդ հոդվածները, Կրթության մասին օրենքի 6.1-րդ հոդվածը, Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքի 4-րդ հոդվածը, Ոստիկանության մասին օրենքի 5-րդ հոդվածը, Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքի 22(1)(2)-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 248-րդ հոդվածը և Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը<sup>13</sup>: Այս դրույթների մեծ մասն արգելում են խտրականությունը ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, ազգության (որն ընկալվում է որպես քաղաքացիություն) և էթնիկական ծագման հիմքով<sup>14</sup>: Սակայն ՌԱԵՀ-ը համարում է, որ Թիվ 7ԸՔՀ-ի 4-րդ կետի իմաստով ուղղակի և անուղղակի խտրականության սահմանումը ներառող միակ օրենսդրությունը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքն է<sup>15</sup>:

14. Հայաստանի օրենքը բացահայտորեն չի թույլ տալիս դրական միջոցներ կիրառել խոցելի խմբերի համար (Թիվ 7 ԸՔՀ-ի 5-րդ կետ), և չկա որևէ դրույթ, որն արգելում է Թիվ 7 ԸՔՀ-ի 6-րդ կետում թվարկված խտրականության հատուկ ձևերը: Որևէ կոնկրետ դրույթ պատասխանատվություն չի դնում պետական իշխանությունների վրա դրականորեն խթանելու հավասարությունը կանխարգելելու խտրականությունը, ինչպես առաջարկվում է Թիվ 7 ԸՔՀ-ի 8-րդ կետով: Ինչ վերաբերում է հանրային գնումներին, ապա ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանի օրենքը չի նախատեսում, որ պայմանագրյալները պետք է դրականորեն խթանեն ՌԱԵՀ-ի իրավասության շրջանակով նախատեսված հիմքերով (Թիվ 7 ԸՔՀ-ի 9-րդ կետ) խտրականության բացառման քաղաքականություն:
15. Ինչ վերաբերում է դատական և/կամ վարչական վարույթների հասանելիությանը, ապա ՌԱԵՀ-ը համարում է, որ խտրականության դեպքերի մեծ մասը գործնականում պետք է քննվի դատարաններում, ինչը լիովին համահունչ չէ Թիվ 7 ԸՔՀ-ի 10-րդ կետի հետ (նաև տես ստորև՝ 20-րդ և 22-րդ կետերը): Ինչ վերաբերում է, մասնավորապես, զբաղվածության ոլորտին, հարկ է ընդգծել, որ Աշխատանքի տեսչությունը լուծարվել է, և աշխատավայրում խտրականության մշտադիտարկման նրա դերը չի ստանձնվել որևէ այլ պետական մարմնի կողմից: Բացի այդ, չկա հատուկ կանոն խտրականության գործերով ապացուցման բեռը կիսելու վերաբերյալ (Թիվ 7 ԸՔՀ-ի 11-րդ կետ):
16. Չկա որևէ մեխանիզմ, որի միջոցով հնարավոր լինի վերանայել օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների խտրականության արգելման համապատասխանությունը (Թիվ 7 ԸՔՀ-ի 13-րդ կետ): Նմանապես, չկան

<sup>13</sup>Ղազարյան Ա. և Գրիգորյան Վ. (2015), էջ 11:

<sup>14</sup>Ղազարյան Ա. և Գրիգորյան Վ. (2015), էջ 12:

<sup>15</sup>Տես՝ Կանանց և տղամարդկանց հավասար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները:

առանձին դրույթներ, որոնք հարկադրում են պայմանագրերում, համաձայնագրերում կամ ներքին կանոններում և կանոնակարգերում ներառված խտրական որևէ դրույթ փոփոխելու կամ անվավեր ճանաչելու (Թիվ 7 ԸՔՀ-ի 14-րդ կետ), ռասիզմ խթանող կազմակերպությունների պետական ֆինանսավորումն արգելելու (Թիվ 7 ԸՔՀ-ի 16-րդ կետ) կամ ռասիստական կազմակերպությունները լուծարելու (Թիվ 7 ԸՔՀ-ի 17-րդ կետ) պարտականություն:

17. ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ընդունեն խտրականությունն արգելող քաղաքացիական և վարչական համապարփակ օրենսդրություն, որում նաև պետք է ներառվեն ՌԱԵՀ-ին հետաքրքրող հիմքերը կյանքի բոլոր ոլորտներում: Այս կապակցությամբ այն վկայակոչում է իր Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականը:

- **Մասնագիտացված ներպետական մարմիններ<sup>16</sup>**

18. ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանում միակ մարմինը, որը կարող է գործել որպես մասնագիտացված մարմին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն է (այսուհետ՝ «Պաշտպան»), որը հիմնադրվել է Մարդու իրավունքների պաշտպանի մասին 2003թ. օրենքով (այսուհետ՝ «ՄԻՊՕ»): Սակայն Պաշտպանը պատասխանատու է միայն պետական մարմինների կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ռոտահարումից անհատներին պաշտպանելու համար (ՄԻՊՕ, հոդված 2): Մա նշանակում է, որ Պաշտպանը չի կարող զբաղվել խտրականության հարցերով, որոնք վերաբերում են մասնավոր ոլորտին<sup>17</sup>:

19. Չնայած այս սահմանափակմանը՝ ՌԱԵՀ-ը նշում է, որ Պաշտպանին շնորհվել է «A» կարգավիճակ Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների միջազգային կոորդինացիոն կոմիտեի (ICC) կողմից, ինչը նշանակում է, որ այս հաստատությունը լիովին համապատասխանում է Փարիզյան Սկզբունքներին: Բացի այդ, ՌԱԵՀ-ի Թիվ 2 ԸՔՀ-ի 3-րդ սկզբունքի համաձայն՝ Պաշտպանին կարող են դիմել ֆիզիկական անձինք (ՄԻՊՕ, հոդված 7) և իրավաբանական անձինք (ՄԻՊՕ, հոդված 8.1): Նա կարող է իրականացնել հետաքննություններ և իշխանություններից և նրանց ներկայացուցիչներից պահանջել տեղեկություններ (ՄԻՊՕ, հոդված 12):

20. Այդուհանդերձ, բացակայում են խտրականության դեպքերում ապացուցման բեռը բաշխելու վերաբերյալ դրույթներ: Արդյունքում պետական մարմինները կարող են խուսափողական պատասխաններ տալ նման բողոքողներին, իսկ խտրականությունից տուժածները դժկամությամբ են դիմում Պաշտպանին: ՌԱԵՀ-ը նշում է, օրինակ, որ 2014թ.-ին Պաշտպանը չի քննել ռասայական խտրականության վերաբերյալ որևէ բողոք:

<sup>16</sup>Անկախ մարմիններ, որոնց բացահայտորեն վստահվել է էթնիկական ծագման, մաշկի գույնի, քաղաքացիության, կրոնի և լեզվի (ռասայական խտրականության) հիմքերով ռասիզմի, այլապաշտության, հրեատյացության, անհանդուրժողականության և խտրականության դեմ պետական մակարդակով պայքարը:

<sup>17</sup>Հայաստանի իշխանությունները ՌԱԵՀ-ին տեղեկացրել են, որ 2015թ. դեկտեմբերին փոփոխված Սահմանադրության 210-2-րդ հոդվածով նախատեսվում է, որ Պաշտպանը նաև պատասխանատու է քննելու նույն խախտումները, որոնք կատարվել են «կազմակերպությունների» կողմից: Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 2016թ. փետրվարի թիվՆՀ-170-Ա հրամանագիրը նախատեսում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը պետք է, համապատասխանաբար, փոփոխվի:

21. Պաշտպանը կարող է նաև պահանջել պետական իշխանություններից վերացնել խախտումները (ՄԻՊՕ, հոդված 15.1), գործերն ուղարկել դատարաններ(ՄԻՊՕ, հոդված 15.1-ի 4-րդ կետ), առաջարկել կարգապահական միջոցներ (ՄԻՊՕ, հոդված 15.5) և արտահայտել ընդհանուր կարծիքներ ու ներկայացնել առաջարկություններ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ (ՄԻՊՕ, հոդված 7.3):
22. Սակայն ՄԻՊՕ-ն չի ներառում որևէ դրույթ, որն ուղղակիորեն Պաշտպանին լիազորություն է վերապահում հավասարության սկզբունքին օրենսդրության համապատասխանությունը ստուգելու համար (ըստ Թիվ 7 ՇՔՀ-ի 24-րդ և 53-րդ կետերի): Ավելին, այն սահմանում է, որ Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին (ՄԻՊՕ, հոդված 7.1), ինչը նշանակում է, որ Պաշտպանը չի կարող հայցվորներին ներկայացնել դատարաններում (ըստ Թիվ 7 ՇՔՀ-ի 51-րդ կետի): Ի վերջո Պաշտպանին չի թույլատրվում շարունակել դատարան ներկայացված բողոքների քննությունը (ՄԻՊՕ, հոդված 10.1):
23. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի խտրականության դեպքերում օրենքը նախատեսի ապացուցման բեռի բաշխում: Ի հավելումն, ՌԱԵՀ-ն առաջարկում է իշխանություններին փոփոխություններ կատարել Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում՝ նրան լիազորելու քննել խտրականության վերաբերյալ բողոքները, նաև ՌԱԵՀ-ին հետաքրքրող հիմքերով, մասնավոր ոլորտում: Այլապես, իշխանությունները պետք է ստեղծեն հավասարության անկախ մարմին, որը, ի թիվս այնի, կգրադվի խտրականության՝ ՌԱԵՀ-ին հետաքրքրող հիմքերով, ինչպես առաջարկվում է ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի ներպետական օրենսդրության վերաբերյալ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականում և ռասիզմի, այլատյացության, հրեատյացության և անհանդուրժողականության դեմ պետական մակարդակով պայքարի մասնագիտացված մարմինների վերաբերյալ Թիվ 2 հանձնարարականում:

## 2. Ատելություն սերմանող խոսք<sup>18</sup>

24. Իր 3-րդ զեկույցում<sup>19</sup> ՌԱԵՀ-ը նշել է, որ Հայաստանում էթնիկական փոքրամասնությունների կամ ոչ քաղաքացիների նկատմամբ գոյություն չունի բացահայտ թշնամանք, ներառյալ՝ նրանց, ովքեր էթնիկ հայեր չեն: Այն նաև նշել է, որ չկա հակամահմեդական տրամադրությունների որևէ ապացույց: Հայաստան կատարած իր այցի ընթացքում ՌԱԵՀ-ի պատվիրակությունը հանդիպել է էթնիկական փոքրամասնություններ ներկայացնող տարբեր կազմակերպությունների, որոնք հաստատել են, որ վերջինները ռասիստական ատելություն սերմանող խոսքի թիրախ չեն հանդիսանում: ՌԱԵՀ-ի մտահոգությունները հիմնականում բնեռվում են ԼԳԲՏ համայնքին և ոչ ավանդական կրոնական խմբերին պատկանող անձանց նկատմամբ ատելություն սերմանող խոսքին:

<sup>18</sup>Այս հատվածը վերաբերում է ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի խոսքին: «Ատելություն սերմանող խոսք» սահմանմանը ծանոթանալու համար տես՝ Ատելություն սերմանող խոսքի մասին Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարականն անդամ պետություններին՝ ընդունված 1997թ. հոկտեմբերի 30-ին:

<sup>19</sup>ՌԱԵՀ (2011ա), 43-44-րդ կետեր:

- **Հումֆոբ/տրանսֆոբ բնույթի հայտարարությունների մեկնաբանությունը  
Քրեական օրենսգրքում**

25. ՌԱԵՀ-ը նշում է, որ Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում, որով հանրային ատելություն հրահրելը հայտարարվում է անօրինական, արգելված հիմքերի թվում չի նշվում սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը<sup>20</sup>: Բացի այդ, ինչպես վերը նշվեց (տես՝ 2-րդ կետը), Քրեական օրենսգրքում ներառված չեն դրույթներ, որոնք ամրագրում են, որ հումֆոբ/տրանսֆոբ շարժառիթը ծանրացուցիչ հանգամանք է ցանկացած սովորական հանցագործության դեպքում: Ինչպես վերը նշվեց (տես՝ 9-րդ կետը), Արդարադատության նախարարությունը ներկայումս մշակում է Քրեական օրենսգրքի փոփոխություններ, որոնք հնարավոր է արգելված հիմքերի ցանկում ներառեն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ,հնարավոր է, որ Քրեական օրենսգրքում ավելացվի նաև դրույթ, որը կամրագրի, որ հումֆոբ/տրանսֆոբ շարժառիթը ծանրացուցիչ հանգամանք է բոլոր սովորական հանցագործությունների դեպքում: ՌԱԵՀ-ը կարծում է, որ նշված լրացումներն անհրաժեշտ են ԼԳԲՏ անձանց պաշտպանության պատշաճ մակարդակ երաշխավորելու համար:

26. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հստակորեն ավելացվեն Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի արգելված հիմքերի ցանկում և որ Օրենսգրքում ավելացվի դրույթ, որը հստակորեն կամրագրի հումֆոբ/տրանսֆոբ շարժառիթը, որպես ծանրացուցիչ հանգամանք բոլոր սովորական հանցագործությունների դեպքում:

- **Տվյալներ**

27. ՌԱԵՀ-ն ի գիտություն է ընդունում Հայաստանի իշխանությունների տրամադրած տեղեկությունները, ըստ որոնց՝ 2011թ.-ից ի վեր Հայաստանի Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության կողմից հետաքննվել է հանրության շրջանում ատելություն սերմանող երեք հանցագործություն՝ Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն: Այս երեք դեպքերից միայն մեկն է հանգեցրել դատապարտման (տես՝ 41-րդ կետը): ՌԱԵՀ-ը նաև լավատեղյակ է, որ այս երեք գործերով Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունը զբաղվել է ի պաշտոնե (*ex officio*), և որ այս ժամանակահատվածում 226-րդ հոդվածի ներքո դասվող մասնավոր անձանցից որևէ բողոք չի ստացվել:

28. Տվյալները մատնանշում են, որ վերջին տարիներին եղել են գործեր, որոնք քննվել են իշխանությունների կողմից: Հետևաբար, ՌԱԵՀ-ը հետաքրքրվում է, թե ինչու Հայաստանն այլևս տվյալներ չի տրամադրել ԺՄԻՀԳ-ին՝ վերջինիս՝

<sup>20</sup>«Սեռական կողմնորոշումը վերաբերում է յուրաքանչյուր անձի խորը զգացական, զգացմունքային և սեռական գրավչության կարողությանը և տարբեր կամ միևնույն կամ մեկից ավելի գենդերի անհատների հետ ինտիմ ու սեռական հարաբերություններին», Սեռական կողմնորոշման և գենդերային նույնականացման վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային իրավական նորմերի կիրառման Յոզյակարտյան սկզբունքներ:

<sup>21</sup>«Գենդերային ինքնությունը վերաբերում է յուրաքանչյուրի գենդերային պատկանելության ներքին և անհատական խորին զգացմանը, որը կարող է համընկնել կամ չհամընկնել ծննդյան պահին արձանագրված սեռի հետ, այդ թվում՝ սեփական մարմնի ինքնազգացմանը (որն, ազատ ընտրության դեպքում, կարող է ներառել մարմնի տեսքի կամ դրա ֆունկցիաների փոփոխությունները՝ դեղորայքի, վիրաբուժության կամ այլ միջոցներով) և արտահայտվել գենդերի այլ դրսևորումներով, այդ թվում՝ հագուստի, խոսքի և պահվածքի միջոցով», նույն տեղում:

«Ատելության հողի վրա կատարվող հանցագործություններ ԵԱՀԿ տարածաշրջանում՝ դեպքեր և արձագանքներ»<sup>22</sup> զեկույցի համար: Ավելին, ՌԱԵՀ-ը մտահոգված է քրեական վարույթների փոքրաթիվության և երևույթի հնարավոր չափերի միջև առկա հակադրությամբ, ինչպես մատնանշված է հետագա պարբերություններում:

- **Ատելություն սերմանող խոսքը քաղաքական դիսկուրսում**

29. ՌԱԵՀ-ը նշում է ԼԳԲՏ համայնքին պատկանող անձանց նկատմամբ անհանդուրժող հայտարարությունների մտահոգող մակարդակը, մասնավորապես՝ քաղաքական առաջնորդների կողմից: 2012թ. մայիսի 8-ին Երևանում համասեռականների DIY ակումբի հրկիզումից հետո (տես՝ 59-րդ կետը) Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցության խոսնակ և Խորհրդարանի փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը հրապարակավ նշել է, որ այս հարձակումը «միանգամայն ճիշտ ու արդարացի» էր, և նրանք, ովքեր պաշտպանում են հայաստանցի ԼԳԲՏ անձանց իրավունքները, «այլասերում են մեր հասարակությունը և պղծում են հայերի ազգային նկարագիրը»: Խորհրդարանի մեկ այլ անդամ՝ պատգամավոր Արծվիկ Մինասյանը նշել է, որ ակումբի վրա հարձակում գործած երիտասարդները «շարժվել են մեր հասարակության և ազգային գաղափարաբանության համատեքստում, ճիշտ ձևով»: Նա նաև կոչ է արել դիմակայել «հանրայնացող համասեռամոլությանը»՝ որպես «ազգային անվտանգության սպառնալիքի»: Հայաստանի Նախագահի խորհրդատվական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Հանրային խորհրդի աշխատակազմի ղեկավարը ստեղծել է ֆեյսբուքյան էջ «Ի պաշտպանություն DIY ակումբը պայթեցնող երիտասարդների» կոչ անելով դադարեցնել հարձակումն իրականացնողների հանդեպ հետապնդումը<sup>23</sup>:

30. Կարելի է բերել ավելի թարմ օրինակներ: 2014թ. մայիսին հայկական թերթերից մեկում համասեռական անձանց սև ցուցակի հրապարակումից հետո իշխող քաղաքական կուսակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը հրապարակայնորեն աջակցել է այդ հողվածին: Նա նաև հանդես է եկել որպես վկա թերթի կողմից համապատասխան դատական վարույթներում<sup>24</sup>: Իսկ 2015թ. ապրիլին պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը հրապարակայնորեն հայտարարել է, որ նա միշտ դեմ է քվեարկել Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովին (ԵԽՄՎ) ներկայացված ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության ցանկացած առաջարկի: Նա հատկապես նշել է. «Ես կանեմ ամեն հնարավորը՝ խոչընդոտելու Հայաստանում մետաստազների տարածմանը: Ես ասում եմ սա բացահայտորեն և հրապարակայնորեն»<sup>25</sup>:

- **Ռասիզմը հանրային դիսկուրսի այլ դրսևորումներում**

31. ՌԱԵՀ-ը նմանատիպ միտում է գտնում հանրային դիսկուրսի այլ ձևերում: ՌԱԵՀ-ը նշում է անհանդուրժողական հայտարարություններն ադրբեջանցիների դեմ<sup>26</sup>, ինչպես ցույց է տվել ադրբեջանական ֆիլմի

<sup>22</sup>Տես՝ ՌԽՎՀ (2011):

<sup>23</sup>Աղբյուր՝ Ամնեսթի ինթերնեյշնլ (2013):

<sup>24</sup>Տես՝ ՓԻՆՔ Արմենիա (2014) և Կովկասի իրավապաշտպանների ցանց (2014):

<sup>25</sup>Աղբյուր՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա (2015):

<sup>26</sup><https://www.hrw.org/news/2012/04/17/armenia-investigate-mob-attack-local-ngo>;

<https://www.amnesty.org/en/documents/eur54/001/2012/en/>:

ցուցադրությանն առնչվող միջադեպը<sup>27</sup>: Բացի այդ, որոշ հանրային հարցումներ, որոնք տրամադրվել են պատվիրակությանն այցելությունից հետո, ենթադրում են հրեաների նկատմամբ նախապաշարմունքների զգալի մակարդակ<sup>28</sup>: Ինչպես նաև, Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին 2012թ. օրենքի նախագծի ընդունումը (տես՝ 11-րդ կետը) պատճառ հանդիսացավ հայ հասարակության շրջանակում եռամսյա բանավեճի համար: Օրենքի նախագիծը ներառել է հղումներ «գենդերային հավասարություն» արտահայտությանը, որը կրոնական և պահպանողական առաջնորդները մեկնաբանել են որպես հակահայկական, ոչ ավանդական և, ընդհանուր առմամբ, այլասեռված կամ մեղսագործ:

32. ԼԳԲՏ անձանց նկատմամբ այս թշնամանքը դրսևորվում է նաև ԼԳԲՏ խմբերի և մարդու իրավունքների այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված հանրային միջոցառումներին արձագանքներով: Օրինակ՝ 2012թ. մայիսին ՓԻՆԲ Արմենիան և Կանանց ռեսուրսային կենտրոնը նախաձեռնել էին բազմազանության երթ՝ նշելու ՄԱԿ-ի՝ մշակութային բազմազանության համաշխարհային օրը: Ցուցարարների դեմ տրամադրված մի խումբ անձինք՝ երթն անվանել են «գեյ շքերթ» և հարձակվել մասնակիցների վրա՝ ազգայնական երգեր երգելով և կարգախոսներ հնչեցնելով համասեռականների հասցեին՝ որպես հիվանդության և երեխաների համար սպառնալիքի<sup>29</sup>: Մեկ այլ օրինակ են այն բողոքները, որոնք 2012թ.-ին հանգեցրել են «Պարադա» ֆիլմի ցուցադրության խափանմանը: Ֆիլմը հանդուրժողականության մասին է և վերաբերում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության բացառմանը: Մի շարք վայրերում անսպասելի չեղյալ է հայտարարվել ֆիլմի ցուցադրությունը: Բողոքի ցույցեր են անցկացվել Երևանում՝ Տիկնիկային թատրոնում ֆիլմի ցուցադրության դեմ<sup>30</sup>:
33. ՌԱԵՀ-ը նկատել է նաև ոչ ավանդական կրոնական խմբերի (անդամների) դեմ ատելություն սերմանող խոսքի հերթական դեպքերը: 2013թ. սեպտեմբերի 9-ին լայնորեն լուսաբանվող մամուլ ասուլիսում Հայ առաքելական եկեղեցու սպասավոր Կոմիտաս Հովնանյանը, «Միացյալ երիտասարդական լիգա» կոչվող կազմակերպության ղեկավարի հետ միասին քննադատել են կրոնական փոքրամասնություններին: Ըստ Կ. Հովնանյանի՝ երկրում գոյություն ունեն ավելի քան 215 «աղանդներ», որոնք միլիոնավոր դոլարներ են ստանում արտասահմանից և նպատակ ունեն ոչնչացնել Հայաստանը<sup>32</sup>: 2013թ. սեպտեմբերի 20-ին «Միացյալ երիտասարդական լիգա» և «Մենք» կազմակերպությունները ստորագրահավաք են նախաձեռնել՝ կոչ անելով կառավարությանը հետաքննել բոլոր գրանցված և չգրանցված կրոնական կազմակերպությունների գործունեությունը և արգելելու դրանց «կործանարար» ազդեցությունը հայ հասարակությունում: Խմբերը կոչ են արել կառավարությանն անմիջապես դադարեցնել իրենց վկայակոչմամբ՝ Կյանքի

<sup>27</sup>[http://www.rferl.mobi/a/azerbaijan\\_armenia\\_film\\_festival\\_canceled\\_protests/24547207.html](http://www.rferl.mobi/a/azerbaijan_armenia_film_festival_canceled_protests/24547207.html):

<sup>28</sup>Տես ի թիվս այլնի՝ «Ընդդեմ վարկաբեկման լիգա»-ի համաշխարհային հարցման (ADL Global Survey) տվյալները, ըստ որոնց՝ հարցվածների 58%-ը հրեատյաց տրամադրություններ ունի <http://global100.adl.org/#country/armenia/2014>:

<sup>29</sup>ՊԼԳԱ-Եվրոպա (2013):

<sup>30</sup>Արմենիա Նաու (2012):

<sup>31</sup>Եվրոպական միություն (2012):

<sup>32</sup>ԱՄՆ Պետդեպարտամենտ (2014ա), էջ 6:

խոսք, Եհովայի վկաներ, Ռեյմա, Խորան և Մեծ Շնորհք «աղանդների» գործունեությունը<sup>33</sup>: Նույն տարվա սեպտեմբերին Առաքելական եկեղեցու մի բարձրաստիճան անդամ հանդես է եկել կրոնական փոքրամասնություններին խարանոդ հայտարարություններով, իսկ երկու երիտասարդական կազմակերպություններ շրջանառության մեջ են դրել առցանց խնդրագրեր՝ մեղադրելով Հայաստանի դեմ դավեր նյութող և օտարերկրյա ֆինանսավորում ստացող «պաշտամունքներին» և կոչ անելով կառավարությանը հետաքննել և փակել նման «պաշտամունքները»: Սա հանգեցրել է Ավետարանչական եկեղեցու հովվի և նրա քարտուղարի նկատմամբ հարձակման փորձերի (տես՝ 58-րդ կետը): 2013թ. հոկտեմբերին Միացյալ երիտասարդական լիգան հրապարակել է փոփ արվեստագետների ցուցակ՝ պնդելով, որ նրանք «աղանդավորականներ են»: Վերոնշյալ արվեստագետներից մի քանիսը պաշտպանել են իրենց տեսակետները և անձնական կյանքի գաղտնիության իրենց իրավունքը: Արվեստագետների մեծ մասը հրապարակավ դատապարտել է «աղանդները» և փորձել ապացուցել, որ իրենք Հայ առաքելական եկեղեցու անդամներ են<sup>34</sup>:

34. Բոլորովին վերջերս՝ 2015թ. ապրիլին, Ազգային արժեքների պահպանման ճակատի նախագահ Սևան Աղաջանյանը և Հայաստանի Սոցիալիստական շարժման ղեկավար Ռոբերտ Ահարոնյանը հրապարակային հայտարարություններ են արել Եհովայի վկաների դեմ: Նրանք նրանց ներկայացրել են որպես Հայաստանի ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք և բողոքել, որ ոստիկանությունը միջոցներ չի ձեռնարկել «աղանդի» գործունեությունը սահմանափակելու ուղղությամբ: Այս հայտարարությունները հետևել են մի շարք հանրային կոչերին՝ արգելելու Եհովայի վկաներին առաջարկել իրենց կրոնական հրապարակումները փողոցների շարժական ստենդների վրա: 2015թ. փետրվարին Ռոբերտ Ահարոնյանը նույնիսկ բռնի կերպով հեռացրել է այդպիսի պաստառները և գրքերը:

- **Ռասիզմը համացանցում և ավանդական լրատվամիջոցներում**

35. ՌԱԵՇ-ը նշում է էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ այլատյացության խիստ ցածր մակարդակը Հայաստանի ավանդական լրատվամիջոցներում: Այնուհանդերձ, այնտեղ արձանագրվել են անհանդուրժողական հայտարարությունների մի շարք դեպքեր՝ թիրախավորելով ԼԳԲՏ համայնքին կամ կրոնական ոչ ավանդական խմբերին պատկանող անձանց (տես՝ 24-րդ կետը):

36. Այլատյացության վերաբերյալ հետազոտական զեկույցում<sup>35</sup> այն մասին, թե ինչպես է ազգայնականությունն արտացոլված, մասնավորապես, հայկական առցանց լրատվամիջոցներում, ցույց է տրվել, որ վերլուծության ենթարկված առավել հանրահայտ տասը լրատվամիջոցներից և ոչ մեկը ներգրավված չի եղել անհանդուրժողականության ակտիվ խթանման մեջ և դրանցից ոչ մեկն ազգայնական խմբերի տեսակետներ չի քարոզել: Հայկական առցանց լրատվամիջոցներում ասելություն սերմանող խոսքի միայն մի քանի օրինակներ են բացահայտվել: Այս արդյունքներն ամրապնդվում են առավել

<sup>33</sup>Նույն տեղում:

<sup>34</sup>Նույն տեղում:

<sup>35</sup>Միքայելյան Հ. (2011):

վերջերս իրականացված՝ Հայաստանի լրատվական 9 աղբյուրների հետազոտական մշտադիտարկման արդյունքներով<sup>36</sup>:

37. Ինչ վերաբերում է հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ասելությունն սերմանող խոսքին, ՌԱԵՀ-ը նշում է, որ Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին 2012թ. օրենքի նախագծի ընդունման հետ կապված բանավեճը շատ արագ տարածում է ստացել լրատվամիջոցներում (տես՝ 31-րդ կետը): «Գենդեր» բառը ներկայացվել է որպես տրանսգենդեր, համասեռական և այլասերված բառերի հոմանիշ, մինչդեռ կանանց և ԼԳԲՏ անձանց պաշտպանները ներկայացվել են որպես «ազգային դավաճաններ», «ընտանիք քանդողներ» և «հայկական արժեքներին սպառնալիք»: Լրատվամիջոցներում ԼԳԲՏ անձանց հանդեպ ասելությունն սերմանող խոսքի մեկ այլ առանձնահատուկ մտահոգիչ դեպք արդեն իսկ վկայակոչվել է: 2014թ.-ին «Իրավունք» հայկական թերթը հրապարակել է համասեռական անձանց սև ցուցակ՝ ուղղակիորեն խտրականություն և անհանդուրժողականություն հրահրելով նրանց դեմ:

38. Ինչ վերաբերում է ոչ ավանդական կրոնական խմբերին, ՌԱԵՀ-ը լավատեղյակ է, որ լրատվամիջոցները հրապարակել են մեծ թվով լրատվական նյութեր՝ պիտակավորելով փոքրամասնություն հանդիսացող կրոնական խմբերին որպես «աղանդներ», և քարոզել վախ կրոնական փոքրամասնությունների հանդեպ: Տարբեր հեռուստակայաններ հեռարձակել են քննարկումներ և լրատվական հաղորդումներ՝ փոքրամասնություն հանդիսացող կրոնական խմբերին ներկայացնելով որպես պետության թշնամիներ՝ առանց այդ խմբերին արձագանքելու կամ քննարկմանը մասնակցելու հնարավորություն տալու: Թերթերում հրապարակվել են մի շարք հոդվածներ՝ կրոնական փոքրամասնություններին պատկերելով որպես քրեական հանցագործներ և լրտեսներ: Թեև դրանք չեն վերաբերել որոշակի կրոնական խմբերի, դրանց ընդհանուր արդյունքը եղել է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտը: Կրոնական խմբերը նաև հաղորդել են սոցիալական ցանցերում անհանդուրժողականության և սպառնալիքների աճի մասին<sup>37</sup>: Եհովայի վկաների մասնակցությամբ մի միջադեպ ի ցույց է դնում այս միտումները: 2010թ. նոյեմբերի 10-ին մի շարք լրատվական աղբյուրներ, ներառյալ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը, հաղորդել են, որ Եհովայի վկաների համայնքից մի երիտասարդ տղամարդու մեղադրանք է առաջադրվել իր ծնողների սպանության համար: Բացի Եհովայի վկաների վերաբերյալ նսեմացնող և վիրավորական մեկնաբանություններից, հաղորդումներից մեկի ժամանակ հեռուստադիտողներին առաջարկվել է ֆիզիկական ուժ կիրառել նրանց հանդեպ:

- **Օայրահեղական խմբեր**

39. Իր3-րդ գեկույցում ՌԱԵՀ-ը նշել է «Արիական» կուսակցության առաջնորդի կողմից արված հակահրեական հայտարարությունների մասին: Ըստ Հայաստանի իշխանությունների՝ այդ կուսակցությունն այլևս գոյություն չունի: Սակայն ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ 2011թ.-ին ՌԽՎՀ-ը հանձնարարական է հրապարակել իշխանություններին կոչ անելով ռասայական խտրականություն հրահրող ցանկացած կազմակերպություն անօրինական հայտարարելու

<sup>36</sup>Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե (2014):

<sup>37</sup>ԱՄՆ Պետդեպարտամենտ (2014ա), էջ 5-6:



գործողություններ ձեռնարկել<sup>38</sup>, ինչին ՌԱԵՀ-ը, բնականաբար, համաձայն է: Իր 3-րդ զեկույցում<sup>39</sup> ՌԱԵՀ-ն առաջարկել է իշխանություններին ուշադրություն դարձնել այն պայմանների վրա, որոնց ներքո գործում է Արիական կուսակցությունը, և քննարկեն, թե արդյոք պահանջվում են հետագա գործողություններ: ՌԱԵՀ-ը զարմանքով է նշում, որ որևէ միջոց չի ձեռնարկվել այս կապակցությամբ:

- **Իշխանությունների արձագանքը**

40. ՌԱԵՀ-ն աստելություն սերմանող խոսքը համարում է հատկապես մտահոգիչ, քանի որ դա փաստացի բռնության հանգեցնող առաջին քայլն է, ինչպես ցույց են տվել ոչ ավանդական կրոնական խմբերին (տես՝ 58-րդ կետը) և ԼԳԲՏ համայնքին (տես՝ 59-րդ կետը) պատկանող անձանց դեմ բռնության մի քանի միջադեպերը: Աստելություն սերմանող խոսքին պատշաճ հակազդումը ներառում է իրավապահ հեռուստաալիքներ (քրեական, քաղաքացիական և վարչական իրավական պատժամիջոցներ), ինչպես նաև այլ մեխանիզմներ՝ դրա վնասակար հետևանքների դեմ պայքարելու համար, ինչպես ինքնակարգավորումը, կանխարգելումը և հակադարձող խոսքը:
41. Քրեական իրավունքի պատասխանի հետ կապված ՌԱԵՀ-ը նկատում է, որ դատարանները քննել են միայն երեք գործ: Առաջին գործը վերաբերել է ֆեյսբուքում հակահրեական մեկնաբանություններին: Նախնական հետաքննությունը սկսվել է 2011թ. ապրիլին, սակայն նույն տարվա դեկտեմբերին վարույթը կասեցվել է, քանի որ հանցագործին հնարավոր չի եղել բացահայտել: Երկրորդ դեպքը վերաբերել է տարբեր ինտերնետային կայքերում փաստաթղթերի հրապարակմանը, որոնք հրապարակավ սպառնում էին կամ բռնություն էին հրահրում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի, վրացիների և ռուսների (ինչպես նաև հանրապետության նախկին և ներկա նախագահների) դեմ: Նախնական հետաքննությունը սկսվել է 2013թ. սեպտեմբերին: Նույն տարվա հոկտեմբերին վարույթը կրկին կասեցվել է, քանի որ հանցագործին հնարավոր չի եղել բացահայտել: Երրորդ դեպքը վերաբերել է ենթադրյալ հայկական քարոզչության և Թուրքիայի ու Ադրբեջանի նկատմամբ ահաբեկչական հարձակումների վերաբերյալ լուսանկարչական ալբոմների և տարբեր այլ հրապարակումների վաճառքին: Դրանք, ենթադրաբար, համագոր են եղել ռասայական և կրոնական աստելության հրահրման: 2011թ. ապրիլին կասկածյալ է ձերբակալվել: 2012թ. ապրիլին նրան դատապարտել են չորս տարվա ազատազրկման, սակայն Քրեական գործերով վերաքննիչ դատարանը բեկանել է այդ որոշումը: 2012թ. հուլիսին Գլխավոր դատախազը բողոքել է այդ որոշման դեմ, սակայն ՌԱԵՀ-ի տեղեկություններով՝ լսումների համար դեռևս օր չի նշանակվել:
42. ՌԱԵՀ-ը հետաքննված և/կամ հետապնդվող գործերի սակավությունը վերագրում է մի շարք գործոնների: Ինչպես նշվեց սույն զեկույցի առաջին բաժնում, հանրության շրջանում աստելության սերմանումը քրեականացնող դրույթներում առկա են տարբերբացեր, որոնք թույլ չեն տալիս իշխանություններին քրեական իրավունքի արդյունավետ հակազդեցություն ապահովել ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի աստելություն սերմանող խոսքի դեպքերին: Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ն անդրադառնում է այն տարբեր առաջարկություններին, որ արդեն ներկայացրել է (տես՝ 10-րդ և

<sup>38</sup>ՌԻՄՎՀ (2011), 14-րդ կետ:

<sup>39</sup>ՌԱԵՀ (2011ա), 56-րդ կետ:

26-րդ կետերը): Ավելին, ՌԱԵՀ-ը պատճառներ ունի կասկածելու, որ գոյություն ունեցող քրեական իրավունքի դրույթներն արդյունավետորեն են կիրառվում: Այս կասկածությամբ ՌԱԵՀ-ը նշում է, որ որևէ քրեական վարույթ չի հարուցվել աստելություն սերմանող խոսքի համար վերոնշյալ դեպքերից և ոչ մեկի առնչությամբ, որոնք ներառել են քաղաքական գործիչների կողմից հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի հայտարարություններ (տես՝ 29-30-րդ կետերը):

43. ՌԱԵՀ-ը գտնում է, որ տարբեր նախաձեռնություններ կարող են ձեռնարկվել՝ քրեական իրավունքի գոյություն ունեցող դրույթների կիրառումը բարելավելու նպատակով: Դրա համար անհրաժեշտ են արդարադատական համակարգի նկատմամբ տուժողների վստահությունը խթանող որոշակի միջոցներ: ՌԱԵՀ-ը լավատեղյակ է, որ հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի աստելություն սերմանող խոսքից տուժածներին աջակցություն տրամադրող ՀԿ-ները խուսափում են խրախուսել նրանց բողոք ներկայացնել ոստիկանություն: Դա կապված է իրավապահների կողմից խախտումների մասին հաղորդումների հետ: Ներկայացվել են տարբեր բողոքներ, որոնցից մեկը վերաբերում է նրան, որ ոստիկանությունն արձագանքել է աստելություն սերմանող խոսքի վերաբերյալ բողոքներին՝ մեղադրանքներ ներկայացնելով հայցվորների նկատմամբ, հատկապես, եթե վերջինները եղել են սեքսի ոլորտում աշխատողներ: Հետևաբար, ՌԱԵՀ-ը համարում է (ինչպես Հայաստանի վերաբերյալ իր բոլոր նախկին զեկույցներում<sup>40</sup>), որ իշխանությունները պետք է ստեղծեն ոստիկանության դեմ հարուցած բողոքների քննության անկախ մեխանիզմ: Իշխանությունները հիշեցրել են ՌԱԵՀ-ին, որ քրեական բողոքների քննման համար պատասխանատու է Հատուկ քննչական ծառայությունը: Այդուհանդերձ, ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ անհրաժեշտ է անկախ մեխանիզմ, որը կքննի բոլոր տեսակի բողոքները, այդ թվում և քրեական մեղադրանքներ չներառող բողոքները:

44. ՌԱԵՀ-ը կրկին առաջարկում է ստեղծել ոստիկանության դեմ հարուցած բոլոր տեսակի բողոքների քննության անկախ մեխանիզմ:

45. Ի լրումն և բարելավելու համար աստելություն սերմանող խոսքի դեմ գործող քրեական իրավունքի դրույթների կիրառումը, ՌԱԵՀ-ն իր 2-րդ և 3-րդ զեկույցներում<sup>41</sup> առաջարկել է, որպեսզի դատական համակարգի ներկայացուցիչները, իրավապահները և փաստաբանները վերապատրաստվեն ռասիզմի, ռասայական խտրականության և անհանդուրժողականության դեմ ներպետական և միջազգային նորմերի ոլորտում: Ըստ իշխանությունների՝ դատական համակարգի, իրավապահների և փաստաբանների համար վերապատրաստման դասընթացներ գոյություն ունեն: Թեև այդ դասընթացները, ընդհանուր առմամբ, մարդու իրավունքների վերաբերյալ են, առկա է նաև ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի վերաբերյալ թեմատիկ ուղղություն: Դրանք կազմում են Ոստիկանության ակադեմիայի և Արդարադատության ակադեմիայի նախնական վերապատրաստման բաղկացուցիչ մասը: Ընթացիկ վերապատրաստում է նաև տրամադրվում ոստիկաններին և դատավորներին թեմատիկ հարցերի լայն շրջանակի վերաբերյալ, ներառյալ՝ ՌԱԵՀ-ին հետաքրքրող հարցերը: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Հայաստանը ներգրավվել է Եվրոպայի խորհրդի՝ «Իրավաբան մասնագետների համար մարդու իրավունքների

<sup>40</sup>ՌԱԵՀ (2003ա), 55-րդ կետ, ՌԱԵՀ (2007ա), 97-րդ կետ և ՌԱԵՀ (2011ա), 134-րդ կետ:

<sup>41</sup>ՌԱԵՀ (2007ա), 34-րդ և 96-րդ կետեր, և ՌԱԵՀ (2011ա), 37-րդ կետ:

ուսուցման» (HELP) աջակցության ծրագրում<sup>4243</sup>: ՌԱԵՀ-ը տեղյակ է, որ վերապատրաստման այս նախաձեռնություններն օգնել են բարձրացնել իրավական ոլորտի մասնագետների իրազեկության մակարդակը ռասիզմի և ռասայական խտրականության հարցերի շուրջ և բարելավել են դրանց արդյունավետորեն արձագանքելու վերջինների կարողությունները: Ուստի այն կոչ է անում Հայաստանի իշխանություններին ակտիվացնել իրենց ջանքերն այս ոլորտում: ՌԱԵՀ-ն այս համատեքստում նաև ողջունում է Արդարադատության ակադեմիայի՝ 2016թ. փետրվարի թիվ 54Ա և 5Ա որոշումները:

46. Վերապատրաստումը նաև կօգնի դատական մարմիններին քննել աստելություն սերմանող խոսքի վերաբերյալ գործեր քաղաքացիական և վարչական իրավունքի ոլորտներում: ՌԱԵՀ-ը միանգամայն տեղյակ է, որ խիստ սակավաթիվ այդպիսի բողոքներ են ներկայացվել: Ինչպես նշվեց սույն զեկույցի՝ ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի ներպետական օրենսդրության վերաբերյալ բաժնում, առկա են մի շարք բացեր, որոնք վարկաբեկում են աստելություն սերմանող խոսքին արդյունավետ արձագանքելու՝ քաղաքացիական և վարչական իրավունքի համակարգի կարողությունը: Իշխանություններին բացատրվել է, որ միջազգային պայմանագրերը կարող են վկայակոչվել հայցվորների և ուղղակիորեն կիրառվել դատարանների կողմից: Սակայն իշխանությունները ևս հաստատել են, որ նմանօրինակ դեպքեր չեն եղել: ՌԱԵՀ-ը լավատեղյակ է, որ տուժողները տեղյակ չեն գոյություն ունեցող պաշտպանության միջոցների մասին և արդյունքում չեն ցանկանում բողոք ներկայացնել: Միևնույն ժամանակ ՌԱԵՀ-ը հասկանում է, որ դատարաններն այս ոլորտում փորձառություն չունեն:
47. Արդյունքում ՌԱԵՀ-ը զարմանալի է համարում իշխանությունների այն պնդումները, որ քաղաքացիական և վարչական իրավունքի առկա դրույթներն ամուր հիմք են ծառայում ռասիզմի և/կամ ռասայական խտրականության դեպքերին արձագանքելու համար, օրինակ՝ լրատվամիջոցներում: Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ն իր 3-րդզեկույցում<sup>44</sup> առաջարկել է, որպեսզի իշխանությունները, առանց լրատվամիջոցների անկախությունը վնասելու, աջակցեն Էթիկայի ինքնակարգավորող կանոնագրքի շուտափույթ ընդունմանը՝ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հստակ ձևակերպված դրույթներով: Այն նաև առաջարկել է վերապատրաստման դասընթացներ կազմակերպել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի այն անդամների համար, ովքեր պատասխանատու են Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 24-րդ հոդվածի կիրառման համար, թե ինչպես պահպանել հավասարակշռությունն արտահայտվելու ազատության և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջև: ՌԱԵՀ-ը չի տեղեկացվել այս առումով իշխանությունների ձեռնարկած որևէ նախաձեռնության մասին:
48. ՌԱԵՀ-ը շեշտում է, որ դատարանները չեն կարող գործել որպես արդյունավետ ինքնակարգավորվող մարմինների փոխարինողներ: Մա մեծապես ցույց է տալիս Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ Եհովայի վկաների

<sup>42</sup>Տես՝ <http://helpcoe.org/> և <http://helpcoe.org/news/certificates-award-ceremony-armenia-course-introduction-echr>:

<sup>43</sup>Վերապատրաստման նմանօրինակ նախաձեռնությունների ամբողջական ցանկին ծանոթանալու համար տես՝ Հայաստանի Հանրապետություն (2016), 32-րդ և 82-րդ կետեր:

<sup>44</sup>ՌԱԵՀ (2011ա), 50-րդ կետ:

դեմ կեղծ և նսեմացնող հայտարարություններ ներառած միջադեպում (տես՝ 38-րդ կետը): 2010թ. նոյեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը կոչ է արել զանգվածային լրատվամիջոցներին դադարեցնել Եհովայի վկաների նկատմամբ ուղղված իրենց մեղադրանքները: Քանի որ խնդրո առարկա հեռուստաընկերությունը հրաժարվել է շտկող միջոցառումներ ձեռնարկել, Եհովայի վկաները ստիպված են եղել քաղաքացիական բողոք ներկայացնել դատարաններ՝ խնդրելով նրանց կարգադրել մեղադրյալներին ներողություն խնդրել իրենց գրպարտող հայտարարությունների համար, լիարժեք հերքում տալ և հրապարակել Եհովայի վկաների չիմբազրված պատասխանը: Հեռուստաընկերությունն ի վերջո առաջարկել էր կարգավորում, որը Եհովայի վկաներն ընդունել են և հետ են վերցրել իրենց բողոքը:

49. ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է իշխանություններին առանց լրատվամիջոցների անկախությունը վնասելու սերտ համագործակցել նրանց հետ՝ ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի դեմ հստակ ձևակերպված դրույթներով լրատվական էթիկայի կանոնագիրք ընդունելու, բոլոր լրատվամիջոցների կողմից այդ փաստաթղթի նկատմամբ հավատարմությունը խթանելու և լրատվական ոլորտի մասնագետների համար համապատասխան վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

50. Ինքնակարգավորման կոչ անող մեկ այլ խնդիր են պատգամավորների կողմից հնչեցված անհանդուրժողական հայտարարությունները, մասնավորապես՝ ԼԳԲՏ համայնքի դեմ (տես՝ 29-30-րդ կետերը): ՌԱԵՀ-ը համարում է, որ չնայած պատգամավորների համար նախատեսված Էթիկայի կանոնագրքի առկայությանը՝ այն չի կիրառվում ռասիստական կամ հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի միջադեպերում ներգրավված պատգամավորներին կարգի հրավիրելու համար:

51. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Խորհրդարանում հնարավորինս շուտ ներկայացվի վարքի այնպիսի կանոնագիրք, որը, ի թիվս այլնի, պատժամիջոցներ է ենթադրում ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ արտահայտությունների համար:

52. Ինքնակարգավորումը կարող է արդյունավետ պատասխան ապահովել նման միջադեպերի հետ կապված: Հերքումը կարող է դիտարկվել որպես լրացուցիչ արձագանք: ՌԱԵՀ-ն այս կապակցությամբ հիշեցնում է, որ 2012թ. հունիսին այն հանդես է եկել հայտարարությամբ<sup>45</sup>՝ դատապարտելով Երևանում համասեռականների ակումբի հրկիզմանը հետևած հոմոֆոբ բնույթի մեկնաբանություններն առաջատար քաղաքական գործիչների կողմից (տես՝ 29-րդ և 59-րդ կետերը): Այն կոչ է արել [...] Հայաստանի բոլոր քաղաքական կուսակցություններին զերծ մնալ արտահայտման նման ծայրահեղ ձևերից: ՌԱԵՀ-ն ավստոսանք է հայտնում, որ իշխանությունների կամ քաղաքական առաջնորդների կողմից նման հայտարարությունների որևէ սուր քաղաքական դատապարտում չի եղել<sup>46</sup>: Ընդհանուր առմամբ, ՌԱԵՀ-ը մտահոգ է

<sup>45</sup>ՌԱԵՀ (2012ա):

<sup>46</sup>ՌԱԵՀ-ը նշում է, որ հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի մասին մամուլում տպագրված հոդվածների առնչությամբ (տես՝ 37-րդ կետը), «Իրավունք» թերթի գլխավոր խմբագիր Հովհաննես Գալաջյանը Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից պարզևատրվել է Երախտագիտության մեղալով՝ թերթի կայացման գործում ներդրած ավանդի, ինչպես նաև բազմամյա նվիրումի և արգասաբեր աշխատանքի համար: (Տես՝ <http://www.president.am/hy/decrees/item/1556/>):

ատելություն սերմանող խոսքին արձագանքման բնավ բացակայության հետ կապված, ինչը լայն հասարակության կողմից կարող է ընկալվել որպես այս խոցելի խմբերի և, մասնավորապես, ԼԳԲՏ համայնքի խաբանման պարզունակացում<sup>47</sup>: 2015թ. հոկտեմբերին վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ արձագանքի բացակայությունը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Դրանք հաստատում են այս առնչությամբ հրատապ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը: ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանելու դժկամությունը կարող է պայմանավորված լինել համասեռական ամուսնությունների պաշտպանության ի հայտ գալու վախով (տես՝ 31-րդ և 37-րդ կետերը), որոնք ոմանք համարում են տաքու հայ հասարակության համար: Այդուհանդերձ, դրանք տարբեր հարցեր են:

53. ՌԱԵՀ-ը նաև մտահոգված է, որ ԼԳԲՏ համայնքի անդամների դեմ ատելություն սերմանող ելույթները կարող են բորբոքվել օրենսդրական վերջին նախաձեռնություններով: Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ը հիշեցնում է, որ 2013թ. օգոստոսին Հայաստանի ոստիկանությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը փոփոխելու առաջարկ է ներկայացրել՝ «ոչ ավանդական սեռական հարաբերություններն» արգելելու պատակով: Համապատասխան օրենսդրական նախագիծը ներկայացվել է Խորհրդարան: ՌԱԵՀ-ը ենթադրում է, որ այն այժմ հետ է կանչվել:

54. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ նրանց ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով, կամ նրանց իրավապաշտպանների նկատմամբ հանրության շրջանում հրահրված բռնությունների և ատելության, սպառնալիքների դեպքերը քննվեն և, համապատասխանաբար, պատժվեն:

55. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները հրապարակային հայտարարություն անեն՝ դատապարտելով հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքը և բռնությունները: Այն նաև առաջարկում է, որ քաղաքական կուսակցությունները կոշտ դիրքորոշում որդեգրեն հոմոֆոբ/տրանսֆոբ տրամադրությունների դեմ, հատկապես, երբ դրանում ներգրավված են իրենց անդամները:

56. ՌԱԵՀ-ը համարում է, որ իշխանություններին անհրաժեշտ է ի ցույց դնել իրենց ամուր հանձնառությունը և վճռականությունը՝ ատելություն սերմանող խոսքի հարցին անդրադառնալու նպատակով: ՌԱԵՀ-ը ողջունում է այս կապակցությամբ Կառավարության կողմից ձեռնարկված որոշակի բարձր մակարդակի նախաձեռնությունները, ինչպես օրինակ՝ Երևանում 2013թ. հոկտեմբերին կայացած «Պայքար Եվրոպայում ռասիզմի, այլատյացության և անհանդուրժողականության դեմ» խորհրդաժողովի կազմակերպումը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանակներում:

<sup>47</sup>ԵՄԱ (2012), էջ 30: «Ինչ վերաբերում է արտադատարանական պրակտիկային, իրավիճակը խիստ մտահոգիչ է, քանի որ գրպարտող և վիրավորական բնույթի ելույթները կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, ինչպես նաև ատելություն սերմանող խոսքը բացահայտորեն խրախուսվում են պետական մարմինների և բարձրաստիճան պետական պաշտոնյաների, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչների կողմից»:

**3. Ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի բռնություններ**

**- Հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի բռնությունների մեկնաբանությունը Քրեական օրենսգրքում**

57. Բռնությունների վերաբերյալ Քրեական իրավունքի դրույթները նույնն են, ինչ ատելության հրահրման վերաբերյալ դրույթները: Ուստի ՌԱԵՀ-ի վերոնշյալ մեկնաբանությունները և առաջարկությունները 25-րդ և 26-րդ կետերում վերաբերում են նաև հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի բռնություններին:

**- Տվյալներ և խնդրի մասշտաբները**

58. ՌԱԵՀ-ն ի գիտություն է ընդունում Հայաստանի իշխանությունների տրամադրած այն տեղեկությունները, որոնց համաձայն՝ 2011թ.-ից ի վեր հետաքննվել են ռասիստական հողի վրա կատարված բռնությունների մի շարք դեպքեր: Այս դեպքերի մեծ մասը կապված է եղել Երևանի Ավետարանական եկեղեցու անդամների և առաջնորդի նկատմամբ հարձակումների հետ: Այսպես, 2013թ. սեպտեմբերի 11-ին Երևանի Ավետարանական եկեղեցու հովիվ Լևոն Պարտակչյանը հայտնել է ֆիզիկական բռնության երեք դեպքի մասին, որոնք կատարել է մի երիտասարդ, ով փնտրել է իրեն և ներխուժել եկեղեցու տարածք՝ ձեռքին պահած դանակ: 2013թ. սեպտեմբերի 13-ին երեք անհայտ անձինք փորձել են առևանգել հովիվ Պարտակչյանի քարտուղարուհուն: 2013թ. սեպտեմբերի 18-ին, ըստ պնդումների՝ Սևան քաղաքի մոտակայքում կրակել են մի մեքենայի վրա, որում եղել են եկեղեցու երկու անդամներ:

59. Իշխանությունները հաղորդել են հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի միայն մեկ քրեական գործի մասին, որը կապ ունի 2012թ. մայիսի 8-ին Երևանի համասեռականների D.I.Y ակումբի հրկիզման հետ (տես՝ 29-րդ կետը): ՌԱԵՀ-ն այս թվերը համարում է բավականին զարմացնող և նշում, որ ՀԿ-ների ներկայացրած պատկերը լիովին այլ է: Այսպես, 2011թ.-ին ՓԻՆԲ Արմենիան հաղորդել է տրանսգենդեր անձանց վրա երկու ֆիզիկական բռնության և մեկ հարձակման դեպքերի մասին: 2012թ.-ին Բաց հասարակության հիմնադրամը և ՓԻՆԲ Արմենիան հաղորդել են երկու ֆիզիկական բռնության դեպքերի մասին, մեկը՝ խմբակային հարձակման, իսկ մյուսը՝ մի խումբ տրանսգենդեր անձանց վրա, ինչպես նաև ԼԳԲՏ ցույցի մասնակիցների վրա հետագա խմբակային հարձակման մասին: 2013թ.-ին ՓԻՆԲ Արմենիան հաղորդել է լուրջ վնասվածքի հանգեցրած ֆիզիկական բռնության մեկ դեպքի մասին՝ երկու տրանսգենդեր կանանց վրա կրակոցներ արձակելու արդյունքում, և համասեռական տղամարդու հանդեպ խմբակային ֆիզիկական բռնության կիրառման մեկ դեպքի մասին:

**- Իշխանությունների արձագանքը**

60. Իր 3-րդ զեկույցում<sup>48</sup>, ՌԱԵՀ-ն առաջարկել է, որ քրեական իրավունքն արդյունավետորեն կիրառվի ռասիստական հողի վրա կատարված բռնությունների և դրանց հրահրման բոլոր դեպքերում: ՌԱԵՀ-ը նշում է, որ ոստիկանությունը հետաքննություն է սկսել Երևանի Ավետարանական եկեղեցու հետ կապված բոլոր դեպքերի կապակցությամբ: Դրանցից երկուսի դեպքում վարույթը կասեցվել է, քանի որ հանցագործները չեն բացահայտվել: Երրորդ գործով հանցագործը բացահայտվել է, սակայն դատարանի որոշմամբ՝ նա ազատվել է քրեական պատասխանատվությունից նրա հոգեբուժական

<sup>48</sup>ՌԱԵՀ (2011ա), 63-րդ կետ:

զննումից հետո: Նրան դատապարտելու փոխարեն դատարանը կարգադրել է հոգեբուժական հաստատությունում բուժում ստանալ: Քրեական վարույթներ են հարուցվել նաև համասեռականների ակումբի հրկիզման գործով: Սակայն ՌԱԵՀ-ի ընկալմամբ՝ ոստիկանության կողմից իրականացվող քննության և դատական վարույթների ժամանակ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որևէ անգամ չեն նշվել՝ որպես քրեական հանցագործության հնարավոր հիմքեր: Իշխանությունները հաստատել են, որ այս հիմքերը չեն վկայակոչվել տուժողների կողմից և որպես հանցագործների կողմնակալ շարժառիթներ հաշվի չեն առնվել քննչական մարմինների կողմից: ՌԱԵՀ-ը նշում է, որ հանցագործները դատապարտվել են ազատազրկման, սակայն համաներվել են 2013թ. հոկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քրեական դատարանի որոշումից հետո՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի առթիվ 2013թ. հոկտեմբերի 3-ին Ազգային Ժողովի կողմից համաներման մասին ընդունված որոշման կիրառման հիմքով:

61. ՌԱԵՀ-ը մտահոգված է ԼԳԲՏ անձանց դեմ կատարված բռնությունների դեպքերի՝ իշխանությունների հաղորդած և ՀԿ-ների հաղորդած (տես՝ 29-րդ կետը) թվերի միջև առկա անհամապատասխանությամբ: ՌԱԵՀ-ի կարծիքով՝ դեպքերի փոքր թիվը հիմնականում ատելության, մասնավորապես՝ գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով իրականացված հանցագործություններից տուժածների կողմից հաղորդումներ չտալու հետևանքն է: ՌԱԵՀ-ը նշում է, որ մի շարք ՀԿ-ների խոսքով՝ իրենք ծայրահեղ զգուշավոր են եղել պոտենցիալ տուժողներին ոստիկանությանը բողոք ներկայացնելու խորհուրդ տալու առումով: 2014թ.-ի իր տարեկան զեկույցում ՓԻՆԲ Արմենիան նշել է դեպքեր, երբ ոստիկանությունը հայցվորների դեմ քրեական գործեր է հարուցել կեղծ մատնության համար՝ նրանց ենթադրյալ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով<sup>49</sup>: Դա ակնհայտորեն կապված է ոստիկանության իրականացրած հետաքննությունների արդյունավետության, ինչպես նաև տուժողներին տրամադրվող պաշտպանության բացակայության վերաբերյալ պնդումների հետ<sup>50</sup>:
62. Ատելություն սերմանող խոսքը հետաքննող, հետապնդող և դատական մարմինների կողմից արձագանքման ձևերի միջև ակնհայտ զուգահեռներ են դիտվում: Հետևաբար, ՌԱԵՀ-ը վկայակոչում է քրեական իրավունքի համապատասխան դրույթների բարելավման և ոստիկանության դեմ հարուցած բողոքների քննության նպատակով անկախ մեխանիզմի ստեղծման իր վերոնշյալ առաջարկությունը (տես՝ 10-րդ և 44-րդ կետերը):
63. ՌԱԵՀ-ը հատկապես մտահոգված է ակնհայտ կապով, որն առկա է մի կողմից իշխանությունների կողմից ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի դեմ պայքարելու և ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ հողի վրա կատարված քրեական հանցագործությունները հետաքննելու և հետապնդելու՝ քաղաքական կամքի և հանձնառության բացակայության և մյուս կողմից՝ անպատժելիության մթնոլորտի միջև, ինչը հանգեցնում է ԼԳԲՏ համայնքին և ոչ ավանդական կրոնական խմբերին

<sup>49</sup>ՓԻՆԲ Արմենիա (2014), էջ 6:

<sup>50</sup>ԱՄՆ Պետդեպարտամենտ (2014ա), էջ 6:

պատկանող անձանց նկատմամբ թշնամանքի և բռնության աճի<sup>57</sup>: ՌԱԵՀ-ը նշում է, օրինակ, որ համասեռականների ակումբի վրա հարձակումից հետո (տես՝ 29-րդ և 59-րդ կետերը) դրա տերը ենթարկվել է հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ահաբեկման, սպառնալիքների, ագրեսիայի և հետապնդման: Մի քանի շաբաթ անց նա Հայաստանից հեռացել է Շվեդիա, որտեղ պաշտոնապես ապաստան ստանալու դիմում է ներկայացրել: ՌԱԵՀ-ը տեղյակ է, որ նա գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան<sup>52</sup>: ՌԱԵՀ-ը նաև նշում է, որ վերջերս իրականացված հարցման համաձայն՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը և մարդու իրավունքների պաշտպանության բացակայությունն այն հիմնական պատճառներն են, որ բազմաթիվ ԼԳԲՏ անձինք որոշում են հեռանալ Հայաստանից<sup>53</sup>: Հետևաբար, ՌԱԵՀ-ը համարում է, որ իշխանությունները պետք է հրատապ գործողություններ ձեռնարկեն՝ ԼԳԲՏ համայնքին պատշաճ պաշտպանություն տրամադրելու ուղղությամբ և այս կապակցությամբ վկայակոչում է 54-րդ կետում նշված իր նախորդ առաջարկությունը:

64. ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է, որպեսզի քրեական իրավունքն արդյունավետորեն կիրառվի ռասիստական հողի վրա կատարված բռնությունների և դրանց հրահրման բոլոր դեպքերում, այդ թվում և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի միջադեպերի հետ կապված, մասնավորապես՝ ուշադրությունը բևեռելով իրավապահների կողմից օրենքի նկատմամբ հարգանքին: Ավելին, իշխանությունները պետք է ամենասկզբից բռնի միջադեպերի քննության և դրանց հետևող բոլոր դատական վարույթների ժամանակ ենթադրյալ ռասիստական և/կամ հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը դարձնեն քննության բաղկացուցիչ մասը:

#### 4. Ինտեգրման քաղաքականություններ

65. Հայաստանում կարելի է առանձնացնել ինտեգրման քաղաքականությունների կարիք ունեցող անձանց երկու խումբ՝ փախստականներ և այլ միգրանտներ և պատմականորեն երկրում բնակվող էթնիկական, լեզվական և կրոնական փոքրամասնություններ:

#### - Փախստականներ և այլ միգրանտներ

66. Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Հայաստանը ստիպված է եղել մշտապես գործ ունենալ մեծ թվով միգրանտների հետ, ովքեր հիմնականում էթնիկ հայեր են, Լեռնային Ղարաբաղի հակամարտության, Իրաքում և ավելի վերջերս Սիրիայում տիրող իրավիճակի հետևանքով: ՌԱԵՀ-ը հասկանում է, որ դրա արդյունքում Հայաստանի քաղաքականությունները հիմնականում սևեռվել են բռնի տեղահանված անձանց ինտեգրմանը և հայկական ծագմամբ Հայաստանի քաղաքացի չհանդիսացող անձանց ինտեգրմանը:

67. Այս առնչությամբ մի շարք օրենքներ են ընդունվել կամ փոփոխվել, ինչպես Փախստականների մասին օրենքը, Փախստականների համար իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին օրենքը, Ադրբեջանից բռնազաղթված անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին օրենքը և Քաղաքացիության մասին օրենքը: Բացի օրենսդրություն

<sup>57</sup>Եվրոպական Հանձնաժողով (2015), էջ 8:

<sup>52</sup>Տես՝ Interights:

<sup>53</sup>ՓԻՆԸ Արմենիա և Սոցիոսկոպ (2015թ), էջ 16:



սահմանելուց, իշխանություններն ընդունել են տարբեր ծրագրեր, ինչպես «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը» (ընդունված 2010թ.-ին), «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը» (ընդունված 2011թ.-ին), «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը» (ընդունված 2012թ.-ին) և «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագիրը» (ընդունված 2014թ.-ին)<sup>54</sup>: Այս վերջին փաստաթղթում ներառված են միջոցառումներ փախստականների և երկարաժամկետ միգրանտների ինտեգրման համար: Փաստաթղթի 83-րդ կետում վկայակոչվում է օրենսդրության նախագիծը, որը նախադրյալներ է ստեղծում փախստականների և երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության մշակման համար, որը պետք է ներկայացվի 2016թ.-ին: Ի վերջո 2015թ.-ին մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի» նախագիծը: Նախագծում ներառված են մի շարք թիրախավորված միջոցառումներ, ինչպես հայերեն լեզվի և քաղաքացիական կողմնորոշման և բնակարանով ժամանակավոր ապահովման միջոցառումները: Հայեցակարգը նաև ներառում է միջոցառումներ՝ երաշխավորելու, որ առկա ծառայություններն այս մարդկանց առավել հասանելի են:

68. Ներկայում Հայաստանում չկան համապարփակ ինտեգրման քաղաքականություններ և միգրանտների համակարգված ինտեգրումը դյուրին դարձնող գործնական միջոցառումներ<sup>55</sup>: Իշխանություններն ընդունել են թիրախավորված միջոցառումներ, օրինակ՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանից փախուստի դիմած անձանց, իսկ բոլորովին վերջերս՝ Սիրիայից ապաստան հայցողների համար: Օրինակ՝ 2004թ. մայիսին Կառավարությունը հաստատել է Ադրբեջանից բռնազաղթված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիրը: Բոլորովին վերջերս Սիրիայից փախստականների համար իշխանություններն ընդունել են տարբեր միջոցառումներ, որոնք ներառում են փախստականի կարգավիճակի արագացված կարգով որոշման ընթացակարգերը և փախստականի կարգավիճակի մատչելիությունը, հեշտացված հպատակագրումը, երկարաժամկետ և կարճաժամկետ բնակության թույլտվությունների պարզեցված ընթացակարգով տրամադրումը, ինչպես նաև այլ միջոցառումներ (ներառյալ՝ տարբեր հարկերից և վճարներից ազատումը կամ դրանց նվազեցումը) նրանց արագ վարչական ինտեգրման համար: Միգրացիոն պետական ծառայությունը 2014թ.-ին բացել է «Ինտեգրման կենտրոն»՝ մինչև 29 անձ տեղավորելու համար: ՌԱԵՀ-ը հասկանում է, որ այս ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում են արտաքին դոնորների, ներառյալ՝ միջկառավարական կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ ՄԱԿ ՓՀԳՀ-ի կողմից: Հայաստանի իշխանությունները ՌԱԵՀ-ի

<sup>54</sup>Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրա հետ կապված գործողությունների ծրագիրը ներառում են մարդու իրավունքներին առնչվող խնդիրների լայն շրջանակ: Ինչ վերաբերում է ՌԱԵՀ-ի մտահոգություններին, ապա դրանք ներառում են բաժիններ, որոնք վերաբերում են, ի թիվս այլնի, ռասայական խտրականության դեմ պայքարին, փախստականների և այլ միգրանտների ինտեգրմանը և պատմականորեն երկրում բնակվող էթնիկական, լեզվական և կրոնական փոքրամասնությունների ինքնության, մշակույթի և լեզվի պահպանմանը:

<sup>55</sup>Տես՝ Temesvári, M. and Kokkinaki, C.V. (2013):

ուշադրությունը հրավիրել են այն փաստին, որ տնտեսական իրավիճակը նրանց թույլ չի տալիս միջոցներ տրամադրել ինտեգրման համապարփակ քաղաքականությունների ֆինանսավորման համար: Այդուհանդերձ, ՌԱԵՀ-ը նշել է, որ տարբեր նախարարություններ, ըստ էության, նպատակային միջոցներ են նախատեսել վերոնշյալ որոշ նախաձեռնությունների օժանդակության համար՝ ուղղակիորեն և/կամ այդպիսի գործունեություն ծավալող ՀԿ-ներին դրամաշնորհներ տրամադրելու միջոցով:

69. Ինչ վերաբերում է ապաստան հայցողներին, ապա Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության ներքո գործում է «ընդունելության կենտրոն» նրանց ժամանակավոր կացարանով ապահովելու համար: Ապաստան հայցողները և նրանց ընտանիքները տեղավորվում են այնտեղ, մինչև նրանց ապաստանի վերաբերյալ դիմումի առնչությամբ վերջնական որոշում ընդունելը: Կենտրոնի գործունեությունը և ծառայությունները լիովին ֆինանսավորվում են պետական բյուջեից: ՌԱԵՀ-ը նշում է, որ նրանց նաև տրամադրվում է որոշակի աջակցություն և օգնություն (որը հիմնականում ապահովում է ՄԱԿ ՓՀԳՀ-ն), որը, ի թիվս այլնի, ներառում է հոգեբանական աջակցություն, վարձակալության լրավճարների տրամադրում, լեզվի ուսուցման դասեր և մասնագիտական ու բիզնեսի վերապատրաստման դասընթացներ: Սակայն ապաստան հայցողները փախստականի կարգավիճակ կամ ՀՀ քաղաքացիություն ստանալուն պես այլևս իրավասու չեն օգտվելու օգնության և աջակցության այս սխեմաներից: ՌԱԵՀ-ը նշում է, որ «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը» ենթադրում է, որ նման աջակցությունը պետք է տրամադրվի այն ժամանակահատվածում, որն իրականում անհրաժեշտ է նրանց ինքնաբավությունը հայ հասարակության ներսում երաշխավորելու համար: ՌԱԵՀ-ը համարում է, որ այս առումով առաջընթաց կարող է արձանագրվել Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության վերոնշյալ հայեցակարգի ընդունման արդյունքում, և որ այս խնդիրը կարող է լուծվել ինտեգրման քաղաքականության պլանավորման վերաբերյալ իր առաջարկության իրականացման միջոցով (տես ստորև՝ 78-րդ և 79-րդ կետերը):
70. Ինչ վերաբերում է «Ինտեգրման կենտրոնին», ՌԱԵՀ-ը նկատում է, որ այս հաստատությունը փաստացի նախատեսված է եղել Սիրիայի հայերի համար, ովքեր ազգականներ չունեն Հայաստանում, ուստի սոցիալական ինտեգրմանն առնչվող աջակցության խիստ կարիք ունեն: ՌԱԵՀ-ի պատվիրակությունը նշել է, որ այս Կենտրոնում մի քանի սենյակներ դատարկ են եղել:
71. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ Միգրացիոն պետական ծառայության «Ինտեգրման կենտրոնի» սենյակների մի մասը տրամադրվի այն փախստականներին, ովքեր Սիրիայից չեն կամ եթնիկ հայեր չեն:
72. Գործող օրենքների համաձայն՝ քաղաքացիները, երկքաղաքացիները, փախստականները, քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրացիները, ընդհանուր առմամբ, արժանանում են հավասար վերաբերմունքի բնակարանով և աշխատանքով ապահովման, կրթության, սոցիալական ապահովության և առողջապահության մատչելիության վերաբերյալ քաղաքականությունների հետ կապված: ՌԱԵՀ-ը նաև հասկանում է, որ ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն

աշխատանք փնտրել այն նույն պայմաններով, ինչ քաղաքացիները (եթե օրենքն այլ բան չի նախատեսում), և որ նաև չկան ընդհանուր արգելքներ բիզնես սկսելու համար, ինչպես Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացու դեպքում:

73. Ինչ վերաբերում է Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագրին, ՌԱԵՀ-ը նշում է, որ 2005-2008թթ.-ի ընթացքում 718 ընտանիքներ բնակարաններ են ստացել: 2009թ.-ից ի վեր այդ նպատակով պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել: Չնայած միջոցների բացակայությանը՝ ՌԱԵՀ-ը նշում է, որ 2015թ.-ին իշխանությունները լուծել են այդ խնդիրը 21 ընտանիքների համար, սակայն վերոնշյալ ծրագրի շահառուներ համարվող 903 ընտանիքների հարցը դեռևս լուծված չէ: Ըստ Հայաստանի իշխանությունների՝ այս ծրագիրն ավարտելու համար պահանջվում է 9,5 միլիարդ ՀՀԴ<sup>56</sup>: Կրկին անգամ ՌԱԵՀ-ը կարծում է, որ այս խնդիրն կարելի է անդրադառնալ՝ իրականացնելով ինտեգրման քաղաքականության պլանավորման մասին իր առաջարկությունների կատարման միջոցով (տես ստորև՝ 78-79-րդ կետերը):
74. ՌԱԵՀ-ը նկատել է, որ այս միջոցառումները, որոնք ընդունվել են Սիրիայից փախած անձանց ինտեգրումը դյուրին դարձնելու նպատակով, նպաստել են աճող գայրույթի բռնկմանը հայկական էթնիկական ծագում չունեցող միգրանտների շրջանում, ովքեր համարում են, որ այս միջոցառումները խտրական են: ՌԱԵՀ-ը նշում է, որ համաձայն Միգրացիոն պետական ծառայության տրամադրած ցուցանիշների<sup>57</sup> կարելի է ենթադրել, որ հայկական էթնիկական ծագում չունեցող ապաստան հայցողների համար կարգավիճակի ճանաչման տեմպերն ավելի ցածր են, իսկ առկախված գործերի թիվն ավելի մեծ է: ՄԱԿ ՓՀԳՀ-ն տեղեկացրել է ՌԱԵՀ-ի պատվիրակությանը, որ իրենք հետազոտություն են իրականացրել այս հարցի շուրջ, իշխանությունների ուշադրությունը հրավիրել են այս հարցին և ներկայացրել են մի շարք առաջարկություններ դրա վերաբերյալ: ՌԱԵՀ-ը Հայաստանի իշխանություններին կոչ է անում հաշվի առնել այդ առաջարկությունները: Այս կապակցությամբ այն ողջունում է Արդարադատության ակադեմիայի վերջին նախաձեռնությունները՝ փախստականների իրավունքների պաշտպանության և փախստականների կարգավիճակի չափանիշների կիրառման ոլորտում դասընթացներ իրականացնելու ուղղությամբ, ինչպես նաև 2016թ. մարտին ՄԱԿ ՓՀԳՀ-ի հետ ստորագրած համագործակցության համաձայնության կայացման հետ կապված:
75. Ընդհանրապես, ՌԱԵՀ-ը համարում է, որ վերը նշված՝ ինտեգրման քաղաքականությունների և ծրագրերի գործող տարրերը չափազանց մեծ ուշադրություն են սևեռում հայկական էթնիկական ծագում ունեցող անձանց և այն ընդունված սկզբունքի վրա, որ էթնիկական ծագումն անիմաստ է դարձնում ինտեգրման ջանքերը: Դա այդպես է հատկապես լեզվական քաղաքականության դեպքում: Համաձայն 2013թ.-ին հրապարակված՝ Միգրանտների ինտեգրման քաղաքականության ինդեքսի (MIPEX) գնահատման՝ միգրանտները կազմել են Հայաստանի բնակչության 10.5%-ը՝ կազմված լինելով հիմնականում ԱՊՀ երկրներից եկած աշխատանքային

<sup>56</sup>Հայաստանի Հանրապետություն (2016), 13-րդ կետ:

<sup>57</sup>Տես՝ [http://smsmta.am/?menu\\_id=145](http://smsmta.am/?menu_id=145):

միգրանտներից<sup>58</sup>: 2011թ.-ի մարդահամարի արդյունքները ցույց են տվել, որ Հայաստանի քաղաքացիների համար ռուսերենն առավել տարածված է որպես երկրորդ լեզու<sup>59</sup>: Սակայն սիրիահայերը, օրինակ, խոսում են արևմտահայերեն, որը ժամանակակից հայերենի երկու տարբերակներից մեկն է, և նրանց երկրորդ լեզուն արաբերենն է, ոչ թե ռուսերենը<sup>60</sup>: Մի շարք ՀԿ-ներ և միջազգային այլ կազմակերպություններ ՌԱԵՀ-ի պատվիրակության ուշադրությունը հրավիրել են հնարավոր խտրականության դեպքերին մասնավոր հատվածում: Օրինակ՝ հաղորդվել է, որ տան սեփականատերերն ավելի բարձր վարձ են վերցնում սիրիացի փախստականներից, իսկ աշխատանքի հայտարարություններում նշվում են ոչ պատշաճ լեզվական պահանջներ: Հավասարության վերաբերյալ տվյալների և վիճակագրության, համապարփակ հակախտրական օրենսդրության և արդյունավետ լուծում ապահովող մեխանիզմների բացակայության պայմաններում դժվար է գնահատել այս երևույթի ծավալները:

76. Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ը նշում է, որ միգրացիայի և մարդու իրավունքների պաշտպանության վերոնշյալ փաստաթղթերում (տես՝ 67-րդ կետը) ներառված են ցուցանիշներ այս ծրագրերի իրականացման ընդհանուր արդյունավետությունը գնահատելու համար: Սակայն դրանցում տրամադրված չեն այնպիսի ցուցանիշներ, որոնք կարելի է օգտագործել ՌԱԵՀ-ի մտահոգության առարկա հանդիսացող խոցելի խմբերի իրավիճակի վրա այս ծրագրերի իրական ազդեցությունը չափելու նպատակով<sup>61</sup>: Նմանապես ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանը ընդհանուր և համակարգված ձևով տվյալներ չի հավաքագրում և վիճակագրություն չի տրամադրում հավասարության վերաբերյալ<sup>62</sup>:
77. Այնպիսի համատեքստում, երբ չկա հավասարության վերաբերյալ տվյալների հավաքագրման և վիճակագրության մշակման գործող համակարգ, չկան հստակ ցուցանիշներ միգրանտների և փախստականների վրա ինտեգրմանն առնչվող ծրագրերի ունեցած ազդեցության գնահատման համար, իսկ Հայաստանի իշխանություններն այդ ծրագրերի ֆինանսավորման նպատակով ստիպված են մեծապես ապավինել արտաքին միջոցներին, ինչպես նաև համագործակցել ծրագրեր իրականացնող տարբեր մարմինների հետ, ՌԱԵՀ-ը

<sup>58</sup>Միգրացիոն քաղաքականության խումբ (2013), էջ 7:

<sup>59</sup>Տես՝ <http://armstat.am/file/doc/99486263.pdf>:

<sup>60</sup>ԱՄՆ Պետդեպարտամենտ (2014թ), էջ 23:

<sup>61</sup>Տես՝ ՄԻԺԲ (2014):

<sup>62</sup>Տես՝ Herm, A. and Flander, A.O. (2015): Այս վերջին հետազոտությունը բնութվում է Հայաստանի Հանրապետության Պետական վիճակագրական ծառայության տրամադրած միգրացիոն վիճակագրության և միգրացիայի ու միջազգային պաշտպանության վիճակագրության եվրոպական ու միջազգային չափանիշներին դրա համապատասխանության ուսումնասիրությանը: Այլ եզրակացությունների թվում այն ցույց է տալիս, որ այս վիճակագրության շրջանակները և մանրամասները բավական սահմանափակ են, և միգրացիոն վիճակագրությունը չի կարող համարվել արժանահավատ: ՌԱԵՀ-ը համարում է, որ այս իրավիճակը վերաբերում է հավասարության մասին տվյալներին և վիճակագրությանն ընդհանրապես, և, որ չնայած ըստ էթնիկական ծագման տարանջատման որոշ վիճակագրություն կարելի է գտնել [www.armstat.am](http://www.armstat.am) կայքում, համապարփակ գործող համակարգ չկա: Տես նաև Գրիգորյան Բ. (2014), էջ 11 և 23, և Manke M. (2010):

<sup>63</sup>ՌԱԵՀ-ը նշում է, որ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի թիվ 4 գործողությունը վիճակագրության մշակման քայլեր է ենթադրում: Սակայն որևէ նման գործողություն հնարավոր չէ գտնել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրում:

մատնանշում է ռեսուրսների մոբիլիզացման և միջոցների հայթայթման նախաձեռնությունների առաջնահերթության սահմանման հրատապ անհրաժեշտությունը՝ նույնիսկ նախքան ապագայում ինտեգրման համապարփակ քաղաքականության ընդունումը:

78. ՌԱԵՀ-ն առաջարկում է մշակել ինտեգրման ազգային ռազմավարություն: Այս ռազմավարությունը պետք է մշակվի շահագրգիռ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ խորհրդակցությամբ: Այն նաև համակարգման հստակ մեխանիզմներ պետք է ստեղծի բոլոր համապատասխան նախարարությունների, ծրագրեր իրականացնող գործակալությունների և հավանական դոնորների միջև:
79. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ խոցելի խմբերի ինտեգրման նպատակ հետապնդող ծրագրեր ներառող գործողությունների մի շարք ծրագրերում ընդգրկվի դրանց նպատակների նկարագիրը, ընկալվի, թե շահագրգիռ բոլոր խոցելի խմբերի իրավիճակի ինչ փոփոխություններ պետք է իրականացվեն, ներառվի չափանիշների համախումբ՝ այս խմբերի վրա այդ ծրագրերի ունեցած ազդեցությունը գնահատելու նպատակով, սահմանվեն այն միջոցառումները, որոնք պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեից և նրանք, որոնց ֆինանսավորումը պետք է հայթայթել արտաքին դոնորներից: Այս առաջարկությունը վերաբերում է գործող առանձին ծրագրերին և ապագա բոլոր ծրագրերին, որոնք կբխեն ներկայում ընդունվող ինտեգրման համապարփակ քաղաքականությունից:

**Պատմականորեն երկրում բնակվող էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններ<sup>6465</sup>**

80. Իր 3-րդ զեկույցում<sup>66</sup> ՌԱԵՀ-ն արդեն նշել է էթնիկական փոքրամասնությունների կրթության և մշակույթի ոլորտում իշխանությունների գործադրած զգալի ջանքերի մասին: Այն ողջունում է վերջին տարիներին գործադրած լրացուցիչ ջանքերը և նշում, որ այս փոքրամասնություններին ներկայացնող միավորումների հիմնական մասը, ում հետ հանդիպել է ՌԱԵՀ-ի պատվիրակությունն իր այցելության շրջանակներում, նշել են, որ իրենք իշխանությունների կողմից խտրականության ենթարկված լինելու զգացում չունեն և որ բավարար աջակցություն են ստացել պետությունից:
81. Իր 3-րդ զեկույցում<sup>67</sup> ՌԱԵՀ-ն առաջարկել է գերակայությունը տալ մանկապարտեզների բացմանը ազգային փոքրամասնություններով բնակեցված այն համայնքներում, որտեղ երեխաները չունեն անհրաժեշտ լեզվական հմտություններ տարրական դպրոց հաճախելու համար: ՌԱԵՀ-ը նշում է, որ ՌԻՄՎՀ-ն արտահայտել է միևնույն մտահոգությունը՝ Հայաստանի

<sup>64</sup>Երկրում պատմականորեն բնակվող էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնությունների ինքնության պահպանությանն առնչվող հարցերով զբաղվում են Եվրոպայի խորհրդի մասնագիտացված մոնիթորինգային մեխանիզմները, որոնք ստեղծվել են Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի շրջանակներում, ինչպես նաև Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի շրջանակներում: Ուստի ՌԱԵՀ-ն իր ուշադրությունը կկենտրոնացնի նրանց սոցիալական ինտեգրման քաղաքականությանը:

<sup>65</sup>Շատ 2011թ.-ի ամենավերջին մարդահամարի արդյունքների՝ 3 018 854 ողջ բնակչությունից 2 961 801-ը հայեր են (98.1%), 35 308-ը՝ եզդիներ (1.2%), 11 911-ը՝ ռուսներ (0.4%), 2 769-ը՝ ասորիներ (0.1%), 2 162-ը՝ քրդեր, 1 176-ը՝ ուկրաինացիներ, 900-ը՝ հույներ, 617-ը՝ վրացիներ և 476-ը՝ պարսիկներ: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, տես՝ [www.armstat.am](http://www.armstat.am):

<sup>66</sup>ՌԱԵՀ (2011ա), 65-րդ կետ:

<sup>67</sup>ՌԱԵՀ (2011ա), 72-րդ կետ:

իշխանություններին կոչ անելով «լեզվական աջակցություն տրամադրել նախադպրոցական կրթության ոլորտում փոքրամասնություններ ներկայացնող աշակերտների համար»<sup>68</sup>։ Այլ աղբյուրներ նույնպես վկայակոչում են նախադպրոցական կրթության ոչ բավարար մատչելիությունը, և դրա արդյունքում էթնիկական փոքրամասնության ծագում ունեցող աշակերտները, ինչպես ասորիները և եզդիները<sup>69</sup>, հնարավորություն չունեն հայերեն սովորել նախքան հիմնական դպրոց հաճախելը, ինչն ի սկզբանե առաջացնում է վատ առաջադիմության ռիսկ<sup>70</sup>։ Ըստ Մեյվ դը չիլդրեն կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության՝ նախադպրոցական տարիքի երեխաների միայն 28%-ն է ստանում նախադպրոցական կրթություն, հիմնականում համապատասխան ծառայությունների բացակայության կամ ենթակառուցվածքի վատ որակի պատճառով<sup>71</sup>։

82. Հայաստանում կրթության բարելավման ծրագրերից մեկը, որի նպատակն էր, ի թիվս այլնի, «աջակցել հիմնական կրթություն մուտք գործող երեխաների դպրոցական պատրաստվածության բարելավմանը», ստացել է աջակցություն Համաշխարհային բանկից։ Այս ծրագիրը միտված է եղել, մասնավորապես, բարելավելու ավելի քան 12000 երեխաների պատրաստվածությունը դպրոցի համար՝ ընդլայնելով նախադպրոցական հաստատությունները մի շարք մարզերի՝ ազգային փոքրամասնությունների համայնքներ ունեցող գյուղական աղքատ տարածքներում<sup>72</sup>։ Իշխանությունները նաև նշել են, որ այս նախաձեռնությունների կայունության ապահովման նպատակով աստիճանաբար միջոցներ են տրամադրվել պետական բյուջեից։ 2014թ.-ից ի վեր այս միջոցները ծածկում են նախադպրոցական կրթության կարիքները բոլոր մարզերում<sup>73</sup>։

83. Ինչ վերաբերում է միջնակարգ դպրոցի՝ էթնիկական փոքրամասնություններ ներկայացնող շրջանավարտների համար բարձրագույն կրթության մատչելիությանը, ապա ՌԱԵՀ-ն իր 3-րդ զեկույցում նշել էր, որ իշխանությունները որոշ քայլեր են ձեռնարկել այս ուղղությամբ, սակայն խիստ սահմանափակ թվով անձինք են կարողացել օգտվել փոքրամասնություններին ուղղված այս դրական միջոցառումներից։ Այն անհրաժեշտ է համարել, որպեսզի այդ *ad hoc* պայմանավորվածությունները պաշտոնականացվեն, և ընդունվի միջնակարգ դպրոցի՝ էթնիկական փոքրամասնություններ ներկայացնող շրջանավարտների համար բարձրագույն կրթության մատչելիությունը խթանող օրենք<sup>74</sup>։ ՌԱԵՀ-ը չի տեղեկացվել, որ նման օրենք ընդունվել է։ Այն նշում է, որ իր 3-րդ զեկույցում նշված պայմանավորվածությունները դեռևս ուժի մեջ են։ Ըստ իշխանությունների՝ 2010-2015թթ. ժամանակահատվածում միջնակարգ դպրոցի՝ էթնիկական փոքրամասնություն ներկայացնող 9 շրջանավարտների համար դրույցվել է մուտքը բարձրագույն կրթության տարբեր հաստատություններ (6-ը՝ եզդի, 2-ը՝ ասորի և 1-ը՝ քուրդ համայնքներից)։ Սակայն Ազգային վիճակագրական

<sup>68</sup>Տես՝ հղումները ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների խորհրդի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի զեկույցում (2014ա), էջ 12, 8, 71։

<sup>69</sup>ՌԱԵՀ (2011ա), 71-րդ կետ։

<sup>70</sup>Տես՝ Ulasiuk, I. (2013), էջ 31։

<sup>71</sup><https://armenia.savethechildren.net/what-we-do/education>։

<sup>72</sup>Համաշխարհային բանկ (2014)։

<sup>73</sup>Հայաստանի Հանրապետություն (2016), 49-րդ կետ։

<sup>74</sup>ՌԱԵՀ (2011ա), 84-րդ կետ։

ծառայության հրապարակած վիճակագրական տվյալները<sup>75</sup> ցույց են տալիս, որ բարձրագույն կրթության ոլորտում այս դրական միջոցառումները չեն նպաստել էթնիկական փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության միջև կրթական ցուցանիշների հետ կապված առկա բացը կրճատելու առումով, մասնավորապես՝ եզդիների և քրդերի համայնքների համար:

84. ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է օրենք ընդունել՝ միջնակարգ դպրոցի՝ էթնիկական փոքրամասնություններ ներկայացնող շրջանավարտների համար բարձրագույն կրթության մատչելիությունը դյուրացնելու նպատակով:

85. Ինչ վերաբերում է բնակարանով ապահովմանը, ՌԱԵՀ-ն իր 3-րդ գեկույցում<sup>76</sup> առաջարկել է, որպեսզի իշխանություններն աշխատեն համարժեք բնակարանային պայմաններ տրամադրել Ջովուսի գյուղում եզդի ընտանիքներին, որոնք չեն կարողանում սեփականաշնորհման վկայականներ ստանալ իրենց տները բարձր լարման հոսանքազծերի հարևանությամբ գտնվելու պատճառով: Ըստ իշխանությունների՝ այս խնդիրն ի հայտ է եկել տարիների ընթացքում և ազդում է Հայաստանի բնակչության տարբեր հատվածների, այդ թվում և մեծամասնություն կազմող բնակչությանը պատկանող խմբերի վրա: Խորհրդային Միությունից անկախանալուց հետո երկրի իրավական համակարգում ի հայտ եկած իրավաբանական բացթողումների պատճառով համապատասխան օրենսդրությունն այժմ փոփոխվել է, և իշխանությունները ներկայում մշակում են միջոցառումների համախումբ՝ այս գլոբալ խնդրին ներպետական մակարդակում և ոչ խտրական ձևով անդրադառնալու համար:

86. Ընդհանուր առմամբ, ՌԱԵՀ-ն արդեն նշել է, որ հավասարության տվյալներն անբավարար են խտրականության իրավիճակի հստակ պատկեր կազմելու համար (տես՝ 76-77-րդ կետերը), և դա նաև վերաբերում է երկրում պատմականորեն բնակվող փոքրամասնություններին: ՌԱԵՀ-ը համարում է, որ առանց տվյալների և վիճակագրության հնարավոր չէ բացահայտել այն խնդիրները, որոնք լուծման կարիք ունեն: Հետևաբար, ՌԱԵՀ-ն այստեղ վկայակոչում է փախստականների և այլ միգրանտների համար ինտեգրման քաղաքականության պլանավորման վերաբերյալ առաջարկությունները (տես՝ 78-79-րդ կետերը) և համարում, որ դրանք պետք է տարածվեն նաև երկրում պատմականորեն բնակվող փոքրամասնությունների վրա:

## II. Հայաստանին բնորոշ թեմաներ

### 1. Չորրորդ շրջափուլի միջանկյալ գնահատման առաջարկություններ

87. Իր 3-րդ գեկույցում<sup>77</sup> ՌԱԵՀ-ն առաջարկել է հրաժարվել ներկա համակարգից, որով Ազգային փոքրամասնությունների գործունեությունը համակարգող խորհրդի տնօրինմանը հանձնված դրամաշնորհները բաշխվում են հավասար չափերով՝ անկախ յուրաքանչյուր փոքրամասնության թվից, և այն փոխարինել մեկ այլ համակարգով, որով դրամաշնորհները կբաշխվեն յուրաքանչյուր էթնիկական փոքրամասնության իրական կարիքներին համապատասխան: Իր միջանկյալ եզրակացություններում ՌԱԵՀ-ը նշել է, որ Հայաստանի իշխանությունները 2013թ.-ի ընթացքում էապես մեծացրել են էթնիկական

<sup>75</sup>Տես՝ <http://armstat.am/file/doc/99486268.pdf>:

<sup>76</sup>ՌԱԵՀ (2011ա), 87-րդ կետ:

<sup>77</sup>ՌԱԵՀ (2011ա), 69-րդ կետ:

փոքրամասնություններին տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալները, սակայն տարբեր մտահոգություններ են արտահայտել՝ կապված օբյեկտիվ որոշումներ կայացնելու Համակարգող խորհրդի կարողության հետ: Հայաստանի իշխանություններն այն ժամանակ մատնանշել են, որ դրամաշնորհների հատկացման օբյեկտիվ չափանիշները միաձայն ընդունվել են Խորհրդի անդամների կողմից: Ընթացակարգային կանոնները մշակվել և միաձայն ընդունվել են Խորհրդի անդամների կողմից: Ըստ այս կանոնների՝ գերակայությունը տրվում է այն փոքրամասնություններին, որոնք չեն կարող հիմնվել ազգային կամ պետական կառույցների վրա, ինչպես նաև այն ծրագրերին, որոնք նախատեսված են զարգացնելու նրանց ազգային մշակույթը, պահպանելու նրանց լեզուն և ինքնությունը: ՌԱԵՀ-ը համարում է, որ իր առաջարկությունն իրականացվել է:

88. Իր 3-րդ զեկույցում<sup>78</sup> ՌԱԵՀ-ն առաջարկել է, որպեսզի իշխանություններն ապահովեն, որ ոչ մի փախստական ընտանիք չապրի Նոր Նորքի կենտրոնի չվերանորոգված բնակարաններում: Իր միջանկյալ եզրակացություններում ՌԱԵՀ-ը նշել է, որ իրականացվել են հրատապ վերանորոգումներ և որոշ թարմացումներ: Հայաստանի իշխանություններն այնուհետև տեղեկացրել են ՌԱԵՀ-ին, որ տեղադրվել են սանհանգույցներ և վերելակներ, ինչպես նաև վերանորոգվել են աստիճանահարթակները: Նրանք նաև տեղեկացրել են ՌԱԵՀ-ին, որ ՌԱԵՀ-ի առաջարկությունում վկայակոչված դռնորների համաժողովը կազմակերպվել է, սակայն ստացվել է ընդամենը 50 000 ԱՄՆ դոլար՝ Բրազիլիայի կառավարությունից: Իր այցելության ընթացքում ՌԱԵՀ-ի պատվիրակությունն ականատես է եղել, որ վերոնշյալ վերանորոգման աշխատանքը որոշ բարեկարգումների է հանգեցրել: Սակայն վերանորոգման աշխատանքներն իրականացվել են մաս-մաս՝ շենքի տարբեր հատվածներում և տարբեր ժամանակահատվածներում: Արդյունքում որոշ հատվածների վիճակը կրկին վատթարացել է, մասնավորապես՝ կաթոցների պատճառով, որոնք հանգեցրել են խոնավության և բորբոսման: Ուստի ՌԱԵՀ-ը համարում է, որ իր առաջարկությունը լիարժեքորեն չի կատարվել: Այն հասկանում է, որ նշված վերանորոգման աշխատանքների ֆինանսավորումը շարունակում է խնդիր մնալ Հայաստանի ներկա տնտեսական համատեքստում: Այստեղ այն վկայակոչում է 78-րդ և 79-րդ կետերում իր կատարած առաջարկությունները՝ շեշտելով, որ Նոր Նորքի ընդունելության կենտրոնի վերանորոգումը պետք է ներառվի ընդհանուր ֆինանսական ծրագրում:

2. **ԼԳՏՏ անձանց նկատմամբ խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարի քաղաքականություններ**<sup>79</sup>

- **Տվյալներ**

89. Հայաստանում ԼԳՏՏ անձանց վերաբերյալ պաշտոնական տվյալներ չկան: Իշխանությունները բացատրում են, որ Հայաստանի սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ կետն արգելում է առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով<sup>80</sup>: Այնուամենայնիվ, ՌԱԵՀ-ը վկայակոչում է Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով

<sup>78</sup>ՌԱԵՀ (2011ա), 113-րդ կետ:

<sup>79</sup>Եզրաբանության համար տես՝ Եվրոպայի խորհրդում ձևակերպված սահմանումները, Մարդու իրավունքների հանձնակատար, 2011:

<sup>80</sup><http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng>:



խտրականության դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 հանձնարարականը, որում նշվում է, որ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ անձնական տվյալները կարող են հավաքագրվել, երբ դա անհրաժեշտ է որոշակի, օրինական և իրավաչափ նպատակի իրագործման համար: ՌԱԵՀ-ը նշում է 2015թ. դեկտեմբերի բազմաթիվ սահմանադրական փոփոխությունները, որոնք թույլ են տալիս անձնական տվյալների պաշտպանության բարելավում:

90. Առկա սուղ տեղեկատվությունը ստացվում է տարբեր հետազոտություններից և ուսումնասիրություններից: Ըստ տեղական ՀԿ-ի կողմից 2012թ.-ին իրականացված հետազոտության՝ Հայաստանի բնակչության 72%-ի կարծիքով՝ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի «համասեռականների դեմ պայքարի» նպատակով<sup>81</sup>: Նույն տարում ՏՀԶԿ-ի և Կովկասյան հետազոտական կենտրոնի կողմից հրապարակված հետազոտությունը բացահայտել է, որ Հայաստանում հարցմանը մասնակցած անձանց 94%-ը չի ցանկանում համասեռական հարևան ունենալ<sup>82</sup>: ՀԿ-ները հաղորդում են, որ «հասարակությունը կամ համոզված է, որ համասեռականությունը հիվանդություն է, որը պետք է բուժել, կամ մարդիկ պարզապես չեն ցանկանում ընդունել մի բան, որը տարբերվում է բարոյականության և ընտանիքի իրենց ավանդական ընկալումից»: Արդյունքում Հայաստանում բնակվող ԼԳԲՏ անձինք «գոյություն ունեն, սակայն ոչ բոլորն են բացահայտ: Նրանք թաքնվում են՝ չնայած ընդհանուր վերաբերմունքը բացասական չէ: Նրանք պարզապես դիտվում են որպես հիվանդ մարդիկ, ովքեր դժբախտ են այդպիսին ծնված լինելու պատճառով»<sup>83</sup>:

#### - **Օրենսդրություն**

91. Հավասարության ընդհանուր դրույթ է ներառված Հայաստանի սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին կետում, որն արգելում է խտրականությունը՝ կախված, ի թիվս այլնի, սեռից կամ «կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից»: Այս դրույթում չեն նշվում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերը: Ինչպես նշված է սույն գեկույցի քաղաքացիական և վարչական օրենսդրությանը վերաբերող բաժնում, Հայաստանը չունի հակախտրականության մասին առանձին օրենք: Այդուհանդերձ, իշխանությունները մատնանշել են, որ համաձայն Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ներպետական դատարաններում ընթացող դատավարությունների ժամանակ հնարավոր է վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Հետևաբար, սկզբունքորեն, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկված անձինք կարող են օգտագործել այս հնարավորությունը ներպետական դատարաններում: Այնուամենայնիվ, ՌԱԵՀ-ը համարում է, որ ինչպես ատելություն սերմանող խոսքի դեպքում (տես՝ 46-րդ կետը), ընդհանուր հակախտրական չափանիշներ առայժմ չեն կիրառվել ԼԳԲՏ անձանց նկատմամբ դատական վարույթներում, և իշխանությունները ՌԱԵՀ-ին չեն տրամադրել այս առնչությամբ համապատասխան նախադեպային իրավունքի վկայակոչման դեպքերի մասին

<sup>81</sup>ՓԻՆԲ Արմենիա (2011թ), էջ 16:

<sup>82</sup>ILGA-Եվրոպա (2013), էջ 49:

<sup>83</sup>COWI (2010), էջ 5:

տեղեկատվություն: Բացի այդ, քանի որ ապացուցման բեռն ընկած է տուժողի վրա, և գոյություն չունի ո՛չ խտրականության իրավական սահմանում Հայաստանի օրենսդրությունում և ո՛չ էլ խտրականության վերաբերյալ բողոքների քննման համապատասխան մեխանիզմ, ապա դժվար է ապացուցել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերը<sup>84</sup>: Բացի այդ, ՌԱԵՀ-ը կրկնում է, որ Քրեական օրենսգիրքը չի անդրադառնում սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանը՝ որպես քրեական հանցագործություններ դասակարգվող ռասիստական գործողություններից տուժածներին բնորոշ հատկանիշների (տես՝ 2-րդ կետը): Նմանապես, այս հիմքերը նշված չեն Քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածում, որն ամրագրում է, որ որ համապատասխան առանձին ներպետական օրենքի դրույթներում վկայակոչված ցանկացած հանցագործության դեպքում ռասիստական շարժառիթը համարվում է ծանրացուցիչ հանգամանք (տես վերը նշված՝ 7-րդ կետը): Այս կապակցությամբ ՌԱԵՀ-ն այստեղ վկայակոչում է 26-րդ կետում նշված իր առաջարկությունը:

92. Հայաստանի օրենսդրությունը չի ներառում որևէ դրույթ իրավական գենդերի փոփոխության վերաբերյալ: Իրավաբանորեն, տրանսգենդեր անհատները Հայաստանում չեն կարող ենթարկվել սեռափոխության վիրահատությունների կամ փոխել իրենց քաղաքացիական կարգավիճակը<sup>85</sup>: Տրանսգենդեր անհատների նոր և/կամ նախընտրած գենդերի իրավական ճանաչման վերաբերյալ օրենսդրություն չկա<sup>86</sup>: Հայաստանի օրենսդրությունը ոչ արգելում է սեռի փոփոխության վիրահատությունները, և ոչ էլ կարգավորում դրանք: Ինչ վերաբերում է անվան փոփոխմանը, ապա Քաղաքացիական կացության ակտի 58-րդ հոդվածով նախատեսվում է անունը փոխելու հնարավորություն, սակայն չի նշվում, թե արդյոք տրանսգենդեր անձինք կարող են փոխել իրենց անունները<sup>87</sup>: ՌԱԵՀ-ը կարծում է, որ այս իրավիճակը, հավանաբար, համարժեք է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի) խախտմանը:

93. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի իշխանություններն ուսումնասիրություն իրականացնեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածին (անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) օրենսդրության համապատասխանության վերաբերյալ՝ նոր կամ նախընտրած գենդերի ճանաչման հետ կապված քաղաքացիական կարգավիճակի փոփոխության հնարավորության առնչությամբ: Այն նաև առաջարկում է անհրաժեշտության դեպքում փոփոխել բոլոր համապատասխան օրենքները:

94. Մեկ այլ հարցի հետ կապված՝ Հայաստանի օրենսդրությունը չի ճանաչում ԼԳԲՏ անձանց միջև գրանցված ամուսնությունները կամ այլ պաշտոնականացված հարաբերություններ<sup>88</sup>:

<sup>84</sup>COWI (2010), էջ 13:

<sup>85</sup>ՓԻՆԲ Արմենիան այլք (2012), էջ 20:

<sup>86</sup>ՓԻՆԲ Արմենիա և այլք (2012), էջ 20:

<sup>87</sup>COWI (2012), էջ 26-27:

<sup>88</sup>Պարզվում է, որ Հայաստանի օրենսդրության մեջ գոյություն չունի որևէ իրավական դրույթ համասեռական գույգերի կողմից երեխա որդեգրելու վերաբերյալ:

- **Մասնագիտացված ներպետական մարմիններ**

95. Ինչպես նշված է սույն զեկույցի՝ օրենսդրությանը վերաբերող բաժնում, Պաշտպանը պատասխանատու է պետական իշխանությունների կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոտնահարումից անհատներին պաշտպանելու համար, սակայն այս հաստատության հանձնագիրը որևէ հատուկ ձևով չի վկայակոչում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ներկայացված բողոքները: Ինչ վերաբերում է այլ գործառնություններին, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանը 2011թ.-ին համագործակցության համաձայնագիր է ստորագրել ԼԳԲՏ ՀԿ-ի (ՓԻՆՔ Արմենիա) հետ՝ ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության վերաբերյալ<sup>95</sup>: 2012թ.-ին Պաշտպանն օգտագործել է իր լիազորություններն օրենսդրական նախաձեռնության ոլորտում՝ խտրականության մասին օրենքի նախագծի խթանման նպատակով, ինչը, մասնավորապես, վերաբերում է «սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված խտրականությանը»: 2012թ. մայիսին Պաշտպանը մամուլին հաղորդագրություն է տվել՝ դատապարտելով ԼԳԲՏ անձանց դեմ անհանդուրժողականության միջադեպերը<sup>96</sup>: 2015թ.-ին հրապարակված՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ Պաշտպանի տարեկան զեկույցում ներառված են որոշ հիմնական խնդիրներ, որոնց առերեսվում են ԼԳԲՏ անձինք, և վկայակոչված են 2014թ.-ին ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման դեպքեր<sup>97</sup>:

- **Խտրականություն տարբեր ոլորտներում**

96. ՌԱԵՀ-ն արդեն նշել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ թշնամության և անհանդուրժողականության բարձր մակարդակի մասին սույն զեկույցի տարբեր բաժիններում (տես՝ 29-32-րդ, 59-րդ և 90-րդ կետերը): Այն նաև ընդգծել է խտրականությունը, մասնավորապես՝ սեռական կողմնորոշման և գենդերային հիմքերով, արգելող համապարփակ օրենսդրության բացակայության մասին և իր մտահոգություններն է արտահայտել այս իրավական դրույթների, ինչպես նաև դրանց կիրառման արդյունավետության մասին (տես՝ 91-րդ կետը) և ի վերջո ԼԳԲՏ անձանց և Հայաստանում նրանց կենսապայմանների վերաբերյալ տվյալների բացակայության մասին (տես վերը նշված՝ 89-րդ կետը): ՌԱԵՀ-ը նշում է, որ նմանատիպ եզրակացություններ են ներառվել 2014թ.-ի «Օիաձան Եվրոպա» քարտեզում, որն արտացոլում է ԼԳԲՏ մարդու իրավունքները երաշխավորող եվրոպական երկրների օրենսդրությունը և քաղաքականությունները, և որում Հայաստանն ունի երրորդ ամենացածր ցուցանիշը Եվրոպայում<sup>98</sup>:

97. Զբաղվածության ոլորտում տեղական ՀԿ-ներից մեկի կողմից իրականացված և 2013թ.-ին հրապարակված հետազոտության մեջ նշված է, որ Հայաստանում ԼԳԲՏ անձանց 51%-ը մշտապես կամ հաճախ խուսափում են աշխատավայրում բացահայտել իրենց սեռական կողմնորոշումը: Մեկ այլ զեկույցում ընդգծվում է աշխատավայրում բացահայտ ԼԳԲՏ անձանց համար աշխատանքից ազատման ռիսկը: Նույն իրավիճակը գերակշռում է բնակարանային ոլորտում: Թեև սեռական կողմնորոշումը շատ հազվադեպ է կիրառվում որպես մերժման

<sup>95</sup>ՓԻՆՔ Արմենիա (2011ա):

<sup>96</sup>News.Am (2012):

<sup>97</sup>ՓԻՆՔ Արմենիա (2015ա):

<sup>98</sup><http://www.ilga-europe.org/rainboweurope/2014>:

պաշտոնական հիմք, ընդհանուր առմամբ, հասարակության բացասական վերաբերմունքը և մասնավոր տների վարձակալման ոչ թափանցիկ ընթացակարգերը գրեթե անհնար են դարձնում պաշտոնական բողոքների ներկայացումը<sup>93</sup>: Առողջապահության ոլորտում 2013թ.-ին հրապարակված հետազոտության մասնակիցների 54%-ը հաղորդել են, որ իրենց նկատմամբ խտրական վերաբերմունք է ցուցաբերվել առողջապահական հաստատություններում<sup>94</sup>: Մեկ այլ զեկույց ցույց է տալիս, որ շատ բժիշկներ խտրական վերաբերմունք են դրսևորում ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ հրաժարվելով բուժել նրանց, վերջինների փաստացի կամ ընկալվող սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով<sup>95</sup>:

98. Կրթության ոլորտում կառավարությունը նշում է, որ միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերում ներառված են առարկաներ, որոնք վերաբերում են սեռական ինդիքներին և անդրադառնում են խտրականությանը: Աշակերտները գիտելիքներ են ստանում սեռական հարցերի վերաբերյալ, սովորում են անդրադառնալ սեռական հիմքերով խտրականությանը և ձեռք են բերում հանդուրժողական հմտություններ<sup>96</sup>: Մակայն ՌԱԵՀ-ի ընկալմամբ՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության և/կամ հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի շուրջ հարցերի վերաբերյալ թեմաները պատշաճ կերպով չեն ներառվում դպրոցներում սեռական դաստիարակության դասերում: Տեղական ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանում հարցմանը մասնակցած ԼԳԲՏ անձանց 55%-ը մշտապես խուսափում են բացահայտել իրենց սեռական կողմնորոշումը դպրոցում կամ համալսարանում<sup>97</sup>: Ավելին, նրանց 36%-ը հաղորդել է, որ դպրոցական տարիներին ենթարկվել է բանավոր վիրավորանքների (ատելություն սերմանող խոսք, ձեռք առնել, ծաղրանք)<sup>98</sup>:

99. ՌԱԵՀ-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի իշխանություններին հրատապ կերպով անհրաժեշտ է ընդունել համապարփակ օրենսդրություն՝ խտրականությունից, այդ թվում նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերով, պաշտպանելու և այդ ոլորտում բողոքներին անդրադառնալու արդյունավետ մեխանիզմների և ընթացակարգերի ստեղծման նպատակով: ՌԱԵՀ-ը վկայակոչում է այս առնչությամբ իր համապատասխան առաջարկությունները (տես՝ 17-րդ կետը) և ընդգծում ոլորտային գործողությունների ծրագրի անհրաժեշտությունը, որը կարող է, օրինակ, ինտեգրվել ներկայում մշակվող՝ մարդու իրավունքների 2017-2019 թվականների ընդհանուր ծրագրում, և որը կարող է անդրադառնալ Հայաստանում ԼԳԲՏ անձանց առանձնահատուկ իրավիճակին: Այդպիսի ծրագիրը պետք է ներառի ԼԳԲՏ անձանց իրավունքների և նրանց կենսապայմանների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման, ԼԳԲՏ անձանց ընկալման խթանման, հավասար վերաբերմունքի նրանց իրավունքն իրականություն դարձնելու, ԼԳԲՏ անձանց պաշտպանող

<sup>93</sup>COWI (2010), էջ 14:

<sup>94</sup>ՓԻՆԲ Արմենիա (2013), էջ 17:

<sup>95</sup>ՓԻՆԲ Արմենիան այլք (2012), էջ 10:

<sup>96</sup>Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)05 հանձնարարական, Հայաստանի արձագանքը, բաժին 2.67, [http://www.coe.int/t/dghl/standardsetting/hrpolicy/others\\_issues/lgbt/Questionnaire/CDDH\(2013\)004\\_FIN.pdf](http://www.coe.int/t/dghl/standardsetting/hrpolicy/others_issues/lgbt/Questionnaire/CDDH(2013)004_FIN.pdf):

<sup>97</sup>ՓԻՆԲ Արմենիան այլք (2012), էջ 7:

<sup>98</sup>Նույն տեղում, էջ 9:

օրենսդրության սահմանման և նախորդ կետերում նկարագրված՝ առավել հրատապ հարցերի լուծման նպատակներ:

100. ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի կառավարությունը համապատասխան մարմնին հանձնարարի մշակել ԼԳԲՏ հարցերի վերաբերյալ գործողությունների ծրագիր, որը պետք է ներառի ԼԳԲՏ անձանց իրավունքների և նրանց կենսապայմանների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման, ԼԳԲՏ անձանց ընկալման խթանման, հավասար վերաբերմունքի նրանց իրավունքն իրականություն դարձնելու, ԼԳԲՏ անձանց պաշտպանող օրենսդրության սահմանման և նախորդ կետերում նկարագրված՝ առավել հրատապ հարցերի լուծման նպատակներ:



## ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԱԵՀ-ը պահանջում է Հայաստանի իշխանություններից առաջնահերթ իրականացնել հետևյալ երկու առաջարկությունները՝

- ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ իշխանություններն իրենց քրեական իրավունքը, ընդհանուր առմամբ, համապատասխանեցնեն Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականին, ինչպես մատնանշված է նախորդ կետերում: Մասնավորապես՝ դրանք պետք է (i) «արգելված հիմքերի» ցանկում բացահայտորեն ներառեն մաշկի գույնը, լեզուն, ազգությունը (ինչն ընկալվում է որպես քաղաքացիություն), ազգային կամ էթնիկական ծագումը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, (ii) քրեականացնեն բռնությունների հրահրումը և ռասայական խտրականության հրահրումը, (iii) քրեականացնեն ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հանրային ժխտումը, պարզունակացումը, արդարացումը կամ համակերպումը:
- ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ խոցելի խմբերի ինտեգրման նպատակ հետապնդող ծրագրեր ներառող գործողությունների մի շարք ծրագրերում ընդգրկվի դրանց նպատակների նկարագիրը, ընկալվի, թե շահագրգիռ բոլոր խոցելի խմբերի իրավիճակի ինչ փոփոխություններ պետք է իրականացվեն, ներառվի չափանիշների համախումբ՝ այս խմբերի վրա այդ ծրագրերի ունեցած ազդեցությունը գնահատելու նպատակով, սահմանվեն այն միջոցառումները, որոնք պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեից և նրանք, որոնց ֆինանսավորումը պետք է հայթայթել արտաքին դոնորներից: Այս առաջարկությունը վերաբերում է գործող առանձին ծրագրերին և ապագա բոլոր ծրագրերին, որոնք կրիսեն ներկայում ընդունվող ինտեգրման համապարփակ քաղաքականությունից:

Այս երկու առաջարկությունների կատարման միջանկյալ գնահատումը կիրականացվի ՌԱԵՀ-ի կողմից ոչ ուշ, քան սույն զեկույցի հրապարակումից երկու տարի անց:





## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Զեկույցի տեքստում առաջարկությունների տեղը նշված է փակագծերում:

1. (§ 10) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ իշխանություններն իրենց քրեական իրավունքը, ընդհանուր առմամբ, համապատասխանեցնեն Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականին, ինչպես մատնանշված է նախորդ պարբերություններում, մասնավորապես՝ դրանք պետք է (1) «արգելված հիմքերի» ցանկում բացահայտորեն ներառեն մաշկի գույնը, լեզուն, ազգությունը (ինչն ընկալվում է որպես քաղաքացիություն), ազգային կամ էթնիկական ծագումը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, (2) քրեականացնեն բռնությունների հրահրումը և ռասայական խտրականության հրահրումը, (3) քրեականացնեն ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հանրային ժխտումը, պարզունակացումը, արդարացումը կամ համակերպումը:
2. (§ 17) ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ընդունեն խտրականությունն արգելող քաղաքացիական և վարչական համապարփակ օրենսդրություն, որում նաև պետք է ներառվեն ՌԱԵՀ-ին հետաքրքրող հիմքերը կյանքի բոլոր ոլորտներում: Այս կապակցությամբ այն վկայակոչում է իր Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականը:
3. (§ 23) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի խտրականության դեպքերում օրենքը նախատեսի ապացուցման բեռի բաշխում: Ի հավելումն, ՌԱԵՀ-ն առաջարկում է իշխանություններին փոփոխություններ կատարել Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում՝ նրան լիազորելու քննել խտրականության վերաբերյալ բողոքները, նաև ՌԱԵՀ-ին հետաքրքրող հիմքերով, մասնավոր ոլորտում: Այլապես, իշխանությունները պետք է ստեղծեն հավասարության անկախ մարմին, որը, ի թիվս այլնի, կգրադվի խտրականության՝ ՌԱԵՀ-ին հետաքրքրող հիմքերով, ինչպես առաջարկվում է ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի ներպետական օրենսդրության վերաբերյալ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականում և ռասիզմի, այլատյացության, հրեատյացության և անհանդուրժողականության դեմ պետական մակարդակով պայքարի մասնագիտացված մարմինների վերաբերյալ Թիվ 2 հանձնարարականում:
4. (§ 26) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հստակորեն ավելացվեն Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի արգելված հիմքերի ցանկում և որ Օրենսգրքում ավելացվի դրույթ, որը հստակորեն կամրագրի հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը, որպես ծանրացուցիչ հանգամանք բոլոր սովորական հանցագործությունների դեպքում:
5. (§ 44) ՌԱԵՀ-ը կրկին առաջարկում է ստեղծել ոստիկանության դեմ հարուցած բոլոր տեսակի բողոքների քննության անկախ մեխանիզմ:
6. (§ 49) ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է իշխանություններին առանց լրատվամիջոցների անկախությունը վնասելու սերտ համագործակցել նրանց հետ՝ ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն

սերմանող խոսքի դեմ հստակ ձևակերպված դրույթներով լրատվական էթիկայի կանոնագիրք ընդունելու, բոլոր լրատվամիջոցների կողմից այդ փաստաթղթի նկատմամբ հավատարմությունը խթանելու և լրատվական ոլորտի մասնագետների համար համապատասխան վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

7. (§ 51) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Խորհրդարանում հնարավորինս շուտ ներկայացվի վարքի այնպիսի կանոնագիրք, որը, ի թիվս այլնի, պատժամիջոցներ է ենթադրում ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ արտահայտությունների համար:
8. (§ 54) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ նրանց ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով, կամ նրանց իրավապաշտպանների նկատմամբ հանրության շրջանում հրահրված բռնությունների և ատելության, սպառնալիքների դեպքերը քննվեն և, համապատասխանաբար, պատժվեն:
9. (§ 55) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները հրապարակային հայտարարություն անեն՝ դատապարտելով հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքը և բռնությունները: Այն նաև առաջարկում է, որ քաղաքական կուսակցությունները կոշտ դիրքորոշում որդեգրեն հոմոֆոբ/տրանսֆոբ տրամադրությունների դեմ, հատկապես, երբ դրանում ներգրավված են իրենց անդամները:
10. (§ 64) ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է, որպեսզի քրեական իրավունքն արդյունավետորեն կիրառվի ռասիստական հողի վրա կատարված բռնությունների և դրանց հրահրման բոլոր դեպքերում, այդ թվում և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի միջադեպերի հետ կապված, մասնավորապես՝ ուշադրությունը բևեռելով իրավապահների կողմից օրենքի նկատմամբ հարգանքին: Ավելին, իշխանությունները պետք է ամենասկզբից բռնի միջադեպերի քննության և դրանց հետևող բոլոր դատական վարույթների ժամանակ ենթադրյալ ռասիստական և/կամ հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը դարձնեն քննության բաղկացուցիչ մասը:
11. (§ 71) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ Միգրացիոն պետական ծառայության «Ինտեգրման կենտրոնի» սենյակների մի մասը տրամադրվի այն փախստականներին, ովքեր Միրիայից չեն կամ էթնիկ հայեր չեն:
12. (§ 78) ՌԱԵՀ-ն առաջարկում է մշակել ինտեգրման ազգային ռազմավարություն: Այս ռազմավարությունը պետք է մշակվի շահագրգիռ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ խորհրդակցությամբ: Այն նաև համակարգման հստակ մեխանիզմներ պետք է ստեղծի բոլոր համապատասխան նախարարությունների, ծրագրեր իրականացնող գործակալությունների և հավանական դոնորների միջև:
13. (§ 79) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ խոցելի խմբերի ինտեգրման նպատակ հետապնդող ծրագրեր ներառող գործողությունների մի շարք ծրագրերում ընդգրկվի դրանց նպատակների նկարագիրը, ընկալվի, թե շահագրգիռ բոլոր խոցելի խմբերի իրավիճակի ինչ փոփոխություններ պետք է իրականացվեն, ներառվի չափանիշների համախումբ՝ այս խմբերի վրա այդ ծրագրերի ունեցած ազդեցությունը գնահատելու նպատակով, սահմանվեն այն միջոցառումները, որոնք պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեից և նրանք, որոնց ֆինանսավորումը պետք է հայթայթել արտաքին դոնորներից:

Այս առաջարկությունը վերաբերում է գործող առանձին ծրագրերին և ապագա բոլոր ծրագրերին, որոնք կբխեն ներկայում ընդունվող ինտեգրման համապարփակ քաղաքականությունից:

14. (§ 84) ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է օրենք ընդունել՝ միջնակարգ դպրոցի՝ էթնիկական փոքրամասնություններ ներկայացնող շրջանավարտների համար բարձրագույն կրթության մատչելիությունը դյուրացնելու նպատակով:
15. (§ 93) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի իշխանություններն ուսումնասիրություն իրականացնեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածին (անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) օրենսդրության համապատասխանության վերաբերյալ՝ նոր կամ նախընտրած գենդերի ճանաչման հետ կապված քաղաքացիական կարգավիճակի փոփոխության հնարավորության առնչությամբ: Այն նաև առաջարկում է անհրաժեշտության դեպքում փոփոխել բոլոր համապատասխան օրենքները:
16. (§ 100) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի կառավարությունը համապատասխան մարմնին հանձնարարի մշակել ԼԳԲՏ հարցերի վերաբերյալ գործողությունների ծրագիր, որը պետք է ներառի ԼԳԲՏ անձանց իրավունքների և նրանց կենսապայմանների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման, ԼԳԲՏ անձանց ընկալման խթանման, հավասար վերաբերմունքի նրանց իրավունքն իրականություն դարձնելու, ԼԳԲՏ անձանց պաշտպանող օրենսդրության սահմանման և նախորդ կետերում նկարագրված՝ առավել հրատապ հարցերի լուծման նպատակներ:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված գրականության ցանկում նշված են այն հիմնական հրատարակված աղբյուրները, որոնք օգտագործվել են Հայաստանում իրավիճակի ուսումնասիրության նպատակով: Այն չպետք է համարել զեկույցի պատրաստման ընթացքում ՌԱԵՀ-ին մատչելի տեղեկատվական աղբյուրների սպառիչ ցանկ:

### European Commission against Racism and Intolerance (ECRI)

1. ECRI (2014), Conclusions on the implementation of the recommendations in respect of Armenia subject to interim follow-up, CRI(2014)3.
2. ECRI (2012a), Statement by the European Commission against Racism and Intolerance about recent events in Armenia, involving leading political figures openly condoning homophobic violence.
3. ECRI (2011a), Third report on Armenia, CRI(2011)1.
4. ECRI (2007a), Second report on Armenia, CRI(2007)1.
5. ECRI (2003a), Report on Armenia, CRI(2003)36.
6. ECRI (1996), General Policy Recommendation No.1: Combating racism, xenophobia, antisemitism and intolerance, CRI(96)43.
7. ECRI (1997), General Policy Recommendation No.2: Specialised bodies to combat racism, xenophobia, antisemitism and intolerance at national level, CRI(97)36.
8. ECRI (1998a), General Policy Recommendation No.3: Combating racism and intolerance against Roma/Gypsies, CRI(98)29.
9. ECRI (1998b), General Policy Recommendation No.4: National surveys on the experience and perception of discrimination and racism from the point of view of potential victims, CRI(98)30.
10. ECRI (2000), General Policy Recommendation No.5: Combating intolerance and discrimination against Muslims, CRI(2000)21.
11. ECRI (2001), General Policy Recommendation No.6: Combating the dissemination of racist, xenophobic and antisemitic material via the Internet, CRI(2001)1.
12. ECRI (2003b), General Policy Recommendation No.7: National legislation to combat racism and racial discrimination, CRI(2003)8.
13. ECRI (2004a), General Policy Recommendation No.8: Combating racism while fighting terrorism, CRI(2004)26.
14. ECRI (2004b), General Policy Recommendation No.9: The fight against antisemitism, CRI(2004)37.
15. ECRI (2007b), General Policy Recommendation No.10: Combating racism and racial discrimination in and through school education, CRI(2007)6.
16. ECRI (2007c), General Policy Recommendation No.11: Combating racism and racial discrimination in policing, CRI(2007)39.
17. ECRI (2009), General Policy Recommendation No. 12: Combating racism and racial discrimination in the field of sport, CRI(2009)5.
18. ECRI (2011b), General Policy Recommendation No.13: Combating anti-Gypsyism and discrimination against Roma, CRI(2011)37.
19. ECRI (2012b), General Policy Recommendation No.14: Combating racism and racial discrimination in employment, CRI(2012)48.

### Other sources

20. Action Plan for implementation of the policy concept for the state regulation of migration in the Republic of Armenia in 2012-2016.

21. Republic of Armenia (2016), Seventh-Eleventh (joint) Periodic National Report of the Republic of Armenia on the Implementation of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, CERD/C/ARM/7-11.
22. National Statistical Service of the Republic of Armenia, Population census 2011, <http://armstat.am/file/doc/99486263.pdf>
23. Council of Europe (2011), Discrimination based on sexual orientation and gender identity in Europe.
24. Council of Europe (2014), Protection of the Rights of Children from Religious and Ethnic Minority Groups in Armenia – Field Study Report.
25. Council of Europe, Committee of Ministers (1997), Recommendation No. R (97) 20 on “hate speech”.
26. Council of Europe, Committee of Ministers (2010), Recommendation CM/Rec(2010)5 on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity.
27. Council of Europe, Committee of Ministers (2015), Communication from Armenia concerning the case of Virabyan against Armenia (Application No. 40094/05). DH-DD(2015)206.
28. Council of Europe, Steering Committee for Human Rights (CDDH) (2013), Follow-up to Committee of Ministers' Recommendation CM/Rec(2010)05 on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity, [http://www.coe.int/t/dghl/standardsetting/hrpolicy/others\\_issues/lgbt/Questionnaire/CDDH\(2013\)004\\_FIN.pdf](http://www.coe.int/t/dghl/standardsetting/hrpolicy/others_issues/lgbt/Questionnaire/CDDH(2013)004_FIN.pdf).
29. Council of Europe, Parliamentary Assembly (2015), Discrimination against transgender people in Europe - Resolution 2048(2015).
30. Council of Europe, Commissioner for Human Rights (2015), Report following his visit to Armenia from 5 to 9 October 2014, CommDH(2015)2.
31. Council of Europe, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities (2014), Fourth report submitted by Armenia pursuant to Article 25, paragraph 2 of the Framework Convention for the Protection of National Minorities, ACFC/SR/IV(2014)013.
32. United Nations (UN), Committee on the Elimination of Racial Discrimination (CERD) (2011), Concluding observations of the Committee on the Elimination of Racial Discrimination, CERD/C/ARM/CO/5-6.
33. UN, Human Rights Council (HRC), Working Group on the Universal Periodic Review (WG on the UPR) (2014a), Compilation prepared by the Office of the United Nations High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (b) of the annex to Human Rights Council resolution 5/1 and paragraph 5 of the annex to Council resolution 16/ 21 – Armenia, A/HRC/WG.6/21/ARM/2.
34. UN, HRC, WG on the UPR (2014b), Summary prepared by the Office of the High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (b) of the annex to Human Rights Council resolution 5/1 and paragraph 5 of the annex to Council resolution 16/ 21, A/HRC/WG.6/21/ARM/3
35. UN, HRC, WG on the UPR (2015), Report of the Working Group on the Universal Periodic Review – Armenia, A/HRC/29/11.
36. Save the Children, Armenia – Education, <https://armenia.savethechildren.net/what-we-do/education>.
37. World Bank (2014), World Bank Supports Improvement in Education in Armenia, <http://www.worldbank.org/en/news/press-release/2014/03/13/world-bank-supports-improvements-in-education-in-armenia>.
38. European Commission, High Representative of the European Union for Foreign Affairs and Security Policy (2015), Joint Staff Working Document, Implementation of the European

- Neighbourhood Policy in Armenia Progress in 2014 and recommendations for actions, SWD(2015) 63 final.
39. European Union (2012, October 17), Human rights films screenings in Congress Hotel cancelled.
  40. Organisation for Security and Co-Operation in Europe (OSCE), Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR) (2015), Hate Crime Reporting.
  41. Amnesty International (2015), Amnesty International Report 2014/15: The State of the World's Human Rights.
  42. Amnesty International (2013), Armenia: No space for difference.
  43. Armenia Now (2012, October 17), No Kid Stuff Protest in Yerevan opposes screening of film on gay rights at puppet theatre.
  44. Caucasus Equality News Network (2014, November 5), Armenia: Civil society activists join to condemn Iravunk court ruling, <https://cennetwork.wordpress.com/2014/11/05/armenia-civil-society-activists-join-to-condemn-iravunk-court-ruling/>.
  45. Committee to protect freedom of expression (2014), Hate Speech in the Armenian Mass Media, <http://khosq.am/en/monitorings/hate-speech-in-the-armenian-mass-media/>.
  46. COWI, Danish Institute for Human Rights (2010), Study on Homophobia, Transphobia and Discrimination on Grounds of Sexual Orientation and Gender Identity, Sociological Report: Armenia, [http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/ArmeniaSociological\\_E.pdf](http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/ArmeniaSociological_E.pdf).
  47. COWI, Danish Institute for Human Rights (2012?), Study on Homophobia, Transphobia and Discrimination on Grounds of Sexual Orientation and Gender Identity, Legal Report: Armenia, [http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/ArmeniaLegal\\_E.pdf](http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/ArmeniaLegal_E.pdf).
  48. Eurasia Partnership Foundation (2012), Tolerance in Armenia Today: The Perspectives of Religious Tolerance - Occasional Policy Brief.
  49. Ghazaryan, A. and Grigoryan, V. (2015): Is it expedient to adopt a separate non-discrimination law? Legal research, Eurasia Partnership Foundation, [http://www.epfarmeria.am/wp-content/uploads/2014/06/Research-on-Anti-discrimination\\_-21.05.15-ENG\\_Final-1.pdf](http://www.epfarmeria.am/wp-content/uploads/2014/06/Research-on-Anti-discrimination_-21.05.15-ENG_Final-1.pdf).
  50. Grigoryan, I. (2014), Return and other forms of in-migration in Armenia: overview of policies and practices.
  51. Helsinki Citizens' Assembly (2015), Vanadzor Office, Statement about the homophobic and intolerant public speech by the Armenian MP Naira Zohrabyan, <http://hcav.am/en/events/05-05-2015/>.
  52. Herm, A. and Flander, A.O. (2015), Report on Sector Review on Migration Statistics in the Republic of Armenia.
  53. ILGA-Europe: Annual Review of the Human Rights Situation of Lesbian, Gay, Bisexual, Trans and Intersex People in Europe 2013, <http://www.ilga-europe.org/rainboweurope/2014>).
  54. International Centre for the Legal Protection of Human Rights (Interights), Oganezova v Armenia, <http://www.interights.org/oganezova-v-armenia/index.html>.
  55. International Commission of Jurists (2007), Yogyakarta Principles, Principles on the application of international human rights law in relation to sexual orientation and gender identity, [http://www.yogyakartaprinciples.org/principles\\_en.pdf](http://www.yogyakartaprinciples.org/principles_en.pdf).
  56. Institute for Democracy and Human Rights (IDHR) (2014), Efficiency assessment report on the Armenian national strategy on human rights protection.
  57. Kruma, K. (2013), Comparative study on integration policies in CARIM-East countries, Consortium for Applied Research on International Migration (CARIM) – East Research Report 2013/ 40.

58. Manke, M. (2010), Enhancing migration data collection, processing and sharing in the Republic of Armenia: Needs assessment and gap analysis report, International Organization for Migration, strategy on human rights protection.
59. Migration Policy Group (2013), ARMENIA – A Migrant Integration Policy Index (MIPEX) assessment, OSCE/ODIHR.
60. Mikaelian, H. (2011), Nationalist Discourse in Armenia, Caucasus Institute, 2002-2011.
61. Public Information and Need of Knowledge (PINK) NGO, the Heartland Alliance for Human Needs and Human Rights, ILGA-Europe: The European region of the International Lesbian, Gay, Bisexual, Trans and Intersex Association, and The George Washington University Law School International Human Rights Clinic (2012), Human Rights Violations of Lesbian, Gay, Bisexual, and Transgender (LGBT) People in Armenia: A Shadow Report Submitted for consideration at the 105th Session of the Human Rights Committee, [http://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/ngos/LGBT\\_Armenia\\_HRC105.pdf](http://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/ngos/LGBT_Armenia_HRC105.pdf).
62. Minority Rights Group International (2014), State of the World's Minorities and Indigenous Peoples 2014, Events of 2013.
63. News.am (2012, May 23), Armenian Ombudsman condemns incidents of intolerance against LGBT, available at <http://news.am/eng/news/106510.html>.
64. Pink Armenia (2011a, June 13), Historic memorandum between Armenia human rights Ombudsman and PINK Armenia on protection of LGBT rights, <http://pinkarmenia.blogspot.nl/2011/06/historic-memorandum-between-armenia.html>.
65. Pink Armenia (2011b), We and our rights, Public opinion towards LGBT people in Yerevan, Gyumri and Vanadzor cities, <http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtsurveyen/17?e=0>.
66. Pink Armenia (2013), Monitoring of Human Rights Violations of LGBT Persons in Armenia <http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtmonitoring/3?e=4137256/5170316>.
67. Pink Armenia (2014), Iravunk newspaper continues to preach violence, <http://www.pinkarmenia.org/en/2014/07/iravunknewspaper/>.
68. Pink Armenia (2015a, April 21), The Ombudsman's annual report also refers to LGBT issues, <http://pinkarmenia.blogspot.fr/2015/04/the-ombudsmans-annual-report-also.html>.
69. Pink Armenia and Socioscope (2015b), The impact of LGBT emigration on economic indicators or Armenia.
70. Press.am (2014, July 2), Monitoring Study Found Few Instances of Hate Speech in 9 Armenian Media Outlets, <http://www.epress.am/en/2014/02/07/monitoring-study-found-few-instances-of-hate-speech-in-9-armenian-media-outlets.html>.
71. Temesvári, M. and Kokkinaki, C.V. (2013) Analysis of Armenian migration legislation and practice as compared to EU standards, International Organization for Migration.
72. Ulasiuk, I. (2013), National Minorities and Migration in Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova, Russia and Ukraine, Consortium for Applied Research on International Migration (CARIM) - East Research Report 2013/ 33.
73. US Department of State (2014a), International Religious Freedom Report for 2013 – Armenia. <http://c-i.am/wp-content/uploads/2011-Nationalist-Discourse-eng.pdf>.
74. US Department of State (2014b), Armenia 2013 Human Rights Report.
75. Yerevan Press Club (2012), Analysis of Armenia's Judicial Practice in Cases of Libel and Insult [http://ypc.am/upload/Analysis%20of%20Armenia%E2%80%99s%20Judicial%20Practice%20in%20Cases%20of%20Libel%20and%20Insult\\_eng.pdf](http://ypc.am/upload/Analysis%20of%20Armenia%E2%80%99s%20Judicial%20Practice%20in%20Cases%20of%20Libel%20and%20Insult_eng.pdf).



